

Երտողան. «Թուրքիան Թոյլ Պիտի Չտայ Խեղաթիւրել 1915-ի Իրադարձութիւնները»

Թուրքիոյ նախագահ Ռեջէփ Էրտողան Թուրք դեսպաններու համաժողովի ժամանակ յայտարարած է, որ իրենք թոյլ պիտի չտան խեղաթիւրել պատմական փաստերը, որոնց շարքին 1915 թուականի իրադարձութիւնները:

Էրտողան իր խօսքին մէջ ըսած է, որ այս տարի աշխարհի որոշ շրջանակներ պիտի նշեն «այսպէս կոչուած Հայոց ցեղասպանութեան» 100-րդ տարելիցը:

Ըստ «CNN Turk» հեռատեսիլի ալիքին, Էրտողան ճաշի հրաւիրած է համաժողովին մասնակցած Թուրքիոյ դեսպանները եւ ճաշկերոյթի ընթացքին խօսած է նաեւ հայկական հարցերու մասին: Էրտողան ըսած է, թէ հայերը կը գերադասեն իրենց ներուժը վատնել «այսպէս կոչուած Հայոց ցեղասպանութիւնը» քաղաքականացնելու վրայ:

«Այս կապակցութեամբ Թուրքիոյ արտաքին գործերու նախարարութիւնը դուրսը լայնածաւալ գործունէութիւն կը տանի: 2015 թուականին նախարարութիւնը եւ համապատասխան այլ կառույցներ պիտի գործեն համակարգուած: Ես համոզուած եմ, որ անոնք կրնան յաղթահարել անհիմն մեղադրանքները», - դեսպաններուն ըսած է Թուրքիոյ նախագահը:

Միւս կողմէ, Թուրքիոյ վարչապետի գլխաւոր խորհրդական Էթիմ Մահմուտը «Ֆրանս Փրես» գործակալութեանը տուած իր հարցազրոյցի ընթացքին ըսած է թէ,

պէտք է ակնկալել, որ 2015 թուականին՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին, Թուրքիան եւ Հայաստանը կրնան լուծել երկարատեւ ձգձգուող վիճաբանութիւնը:

Հայագրի խորհրդականը ըսած է, որ 2015-ը «ծանր տարի» կ'ըլլայ, բայց մեծ ճեղքումներուն պէտք է աւելի ուշ սպասել:

«Ես կը կարծեմ, 2015-ին խորհրդանշական քայլեր կրնան կատարուիլ ու աւելի զգացական յարաբերութիւններ կրնան հաստատուիլ», - ըսած է Մահմուտը, միաժամանակ ընդգծելով. - «Բայց ես կը կարծեմ՝ աւելի քաղաքական, կամ պատմական խնդիրները կը մնան գալիք տարիներուն»:

«Ես չեմ կարծեր, թէ մենք պէտք է շտապենք 100-ամեակի կապակցութեամբ: Աւելի ուշ գործընթացները աւելի առողջ կ'ըլլան», - ըսած է ան:

Մահմուտը նաեւ կարծիք յայտնած է, որ Ռուսաստան կրնայ դրական դերակատարութիւնը ունենալ: Աւելցնելով, որ վերջին ամիսներուն ռուս-թրքական յարաբերութիւնները աւելի շերմացած են ու սերտացած եւ Մոսկուան կրնայ դրական դեր կատարել հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման հարցով:

«Ֆրանս Փրես» իր կողմէ կ'աւելցնէ, որ Էթիմ Մահմուտը նր Թուրքիոյ հայ համայնքի այն սակաւաթիւ ներկայացուցիչներէն է, որ պետական պաշտօնի նշանակուած է:

Առաջին Անգամ Ըլլալով Հայկական Ծաղկասայլ Մը մասնակցեցաւ Փասատինայի Վարդերու Փառատօնին



Հայկական ծաղկասայլը կը տողանցէ Վարդերու Փառատօնի ընթացքին

Յունուար 1-ի առաւօտեան Փասատինայի «Գոլորատ» պողոտային վրայ տեղի ունեցաւ 126-րդ տարեկան վարդերու փառատօնը, որուն ներկայ եղան աւելի քան 700 հազար հանդիսատեսներ, մինչ միլիոնաւորներ հեռատեսիլի միջոցաւ հետեւեցան աւանդական փառատօնին՝ Միացեալ Նահանգներու, ինչպէս նաեւ աշխարհի տարբեր երկիրներուն մէջ:

Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութեան նախաձեռնութեամբ, առաջին անգամ ըլլալով հայկական ծաղկասայլ մը մասնակցեցաւ տողանցքին, արժանանալով նոյնիսկ մրցանակի: «Քաղաքակրթութեան Օրբան» նշանաբանին տակ տողանցող ծաղկասայլը կը ներկայացնէր հայկական մշակոյթի տարբեր խորհրդանշանները՝ գեղեցիկ եւ տպաւորիչ համադրումով մը:

Ամերիկեան հեռատեսիլի տարբեր ալիքներու հաղորդավարները մեծ գովասանքով անդրադարձան հայկական ծաղկասայլին եւ հայկական մշակոյթի ունեցած նպաստին՝ համաշխարհային քաղաքակրթութեան մէջ:

Ծաղկասայլին վրայ տեղ գրաւած էին դատաւոր Սամուէլ Տէրեղիայեանը, որ առաջին հայ ներգաղթող ԱՄՆ դաշնակցային դատաւորն է, Պր. Գաբրիէլ Ինճէճիկեանը, որ Միացեալ Նահանգներու մէջ առաջին հայկական ամէնօրեայ դպրոցի հիմնադիրն է, յայտնի փաստաբան Մարք Կիրակոսը, բարերարուհի Ֆլորա Տունանեանը, հեռատեսիլի հաղորդավար Ճիլ Սիմոնեանը, Փասատինայի նախկին ոստիկանապետ Պեռնար Մելեքեանը, դերասանուհի Անժելա Սարաֆեանը եւ ուրիշներ:

Հայկական այս անդրանիկ ծաղկասայլը արժանացաւ Փասատինայի Վարդերու Տօնի կազմակերպիչ Ընկերակցութեան նախագահական Մրցանակին:

Հայկական ծաղկասայլի տողանցքը կարելի է դիտել «You Tube»-ի վրայ, «2015 Pasadena Rose Parade Armenia float» անունով:

Հայ-Ատրպէյճանական Սահմանին Իրավիճակը Կը Շարունակէ Մնալ Լարուած

Հայ-Ատրպէյճանական սահմանին իրավիճակը կը շարունակէ մնալ լարուած, երկուստէք խլելով գոհներ:

Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան բանակը կը տեղեկացնէ, որ ատրպէյճանական զինուած ուժերը մնայուն կերպով կը խախտեն զինադադարը:

Պաշտպանութեան բանակի առաջապահ գործառնները պատասխան գործողութիւններով կը յաջողին կասեցրել հակառակորդի գործողութիւնները:

«Ատրպէյճանի որդեգրած է պետական սահմանին մնայուն լարուածութիւն ստեղծելու մարտավարութիւն», «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է Հայաստանի

պաշտպանութեան նախարարի խորհրդական Դաւիթ Զամալեան:

«Եթէ մեզ հետ փորձում են, խօսում են ուժի լեզուով, մենք պէտք է հակընդդէմ ուժ բանեցնենք, որովհետեւ մենք զիջելու ոչինչ չունենք, ընկրկելու տեղ չունենք, հայոց երկու պետութիւնների պետական սահմանը Ատրպէյճանի հետ գծուել է արեամբ», - ըսած է Զամալեանը:

Նախապէս Ղարաբաղի Պաշտպանութեան նախարարութիւնը յայտնած էր, որ վերջին օրերու պատասխան գործողութիւններու արդիւնքով առնուազն երեք ատրպէյճանացի զինուոր սպանուած է:

Հայ Եկեղեցին Նշեց Ծննդեան Տօնը



Նախագահ Սերժ Սարգսեան Մայր Աթոռ Ս. Էջմիածինի մէջ տեղի ունեցած Ծնունդի պատարագի ընթացքին

Յունուար 6-ին, Հայկական Սուրբ Ծննդեան եւ Աստուած յայտնութեան տօնի առթիւ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ մատուցուեցաւ պատարագ, որուն ներկայ եղան Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան եւ տիկինը, վարչապետ Յովիկ Աբրահամեանը, նախարարներ եւ դեսպաններ:

Յունուարի 5-ին բոլոր եկեղեցիներու մէջ տօնական պատարագ (ձրագալոյց) մատուցուեցաւ

ի նշան Սուրբ ծննդեան յայտնութեան: Մարդիկ եկեղեցիներէն վառուած մոմեր տարին իրենց տունները, նշելու համար Սուրբ Ծնունդը: Յունուարի 6-ի առաւօտեան հայկական եկեղեցիներուն մէջ Սուրբ պատարագ մատուցուեցաւ, ապա Ջրօրհնէք կատարուեցաւ:

Հայկական եկեղեցին միակն է, որ Քրիստոսի ծնունդը կը նշէ Յունուարի 6-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպէյճանը սկսում է պատերազմը

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻԹԱՆ

Յունուարի լույս 3-ի գիշերը, երբ Հայաստանն արդէն պաշտօնապէս դարձել էր Եւրասիական Միութեան անդամ, Ատրպէյճանը հայկական ուղղութեամբ ձեռնարկել է երկու դիւերսիոն գործողութիւն: Հայկական կողմից կայ երկու զոր եւ մէկ վիրաւոր:

Դեկտեմբերին Ատրպէյճանը կրկին ակտիւացել էր, լարուածութիւնը մեծացնելով սահմաններին: Ընդ որում, ամանորի նախօրէին հետեւեալ գնդակոծութեան էին ենթարկուած Հայաստանի հիւսիսարեւելեան բնակավայրերը: Այն օրերին, երբ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան պայմանագիրը ստորագրուած ու վաւերացուած էր, իսկ Մոսկուայում Դեկտեմբերի 23-ին տեղի էր ունենում ԵՏՄ վեհաժողովը:

Մոսկուայի այդ վեհաժողովի ժամանակ կատարուեց յատկանշական իրադարձութիւն՝ Փութինը յայտարարեց, որ ՀԱՊԿ երկրների բանակները միացուած են Ռուսաստանի պաշտպանական համակարգին, ինչը նշանակում է, որ այդ բանակները կառավարուելու են Մոսկուայից: Այսինքն, ՀԱՊԿ երկրները, ըստ այդ տրամաբանութեան, յայտնում են Ռուսաստանի անվտանգութեան պատասխանատուութեան գոտում:

Այդ հանդիպմանը Փութինը

յայտարարել էր, որ ՀԱՊԿ անդամ երկրները պէտք է պատրաստ լինեն ռազմական գործողութիւնների կենտրոնական Ասիայում եւ Կովկասում: Աֆղանստանից ՆԱՏՕ-ի զօրքի դուրսբերումից յետոյ այս տարածաշրջանի «պատասխանատուութեան» ծանր բեռն ընկում է Ռուսաստանի ուսերին: ՀԱՊԿ երկրների բանակները դիտուում են որպէս ռեսուրս ապագայ պատերազմի համար:

Բանն այն է, որ բացի հայերից, բոլորի համար արդէն պարզ է, որ Ռուսաստանն ընդունակ է լինել անվտանգութեան երաշխաւոր եւ կատարել նման խնդիրներ իր «ղաշնակիցների» հանդէպ: Բանի որ միայն հայերին դա պարզ է, երեւում է հենց հայկական ուղղութեամբ է ամենավառ ձեւով ցուցադրուելու Ռուսաստանի այդ «յատկութիւնը»: Հայաստանը անվտանգութեան պատճառաբանութեամբ է մտել ԵՏՄ, եւ «անվտանգութեան» բոլոր դաժնութիւններն իր վրայ զգալու է մինչեւ վերջ: Դրա մէջ նոյնիսկ ինչ որ միատիկ կայ, ընդ որում՝ պատմական կտրուածքով:

Ռուսաստանը Հայաստանն իր նախագծերին բռնակցեց Հայաստանում իր ազնեստութեան, Ատրպէյճանի ու Թուրքիայի օգնութեամբ, որոնց նոյնպէս ձեռնուղ էր Հայաստանի ինտեգրումը Եւրատլանտեան կառույցներին: Ռու-

սաստանը Հայաստանի դէմ գինել է Ատրպէյճանին, նրան մղելով դիւերսիաների, որոնք յատկապէս շատ էին 2014 թ.:

Դա ռուս-ատրպէյճանական համաձայնութիւնների ոլորտում Ատրպէյճանի պարտաւորութիւնն է: Այդ դիւերսիաները տապալուեցին, քանի որ հայկական բանակը կարողացաւ ընդունել ինքնիշխան որոշումներ եւ պարտութեան մատնեց Ատրպէյճանին: Եւ ահա, Ատրպէյճանը կրկին դիմել է դիւերսիայի: Ըստ ամենայնի, Պաքուն ցանկանում է ստուգել, թէ արդէօք Դեկտեմբերի 23-ի որոշումները կարող են փոխել իրավիճակը հակամարտութեան գոտում:

Ատրպէյճանը ներկայում պատրաստ է կատարել Մոսկուայի շատ պայմաններ, քանի որ բարդացել են նրա յարաբերութիւններն Արեւմուտքի հետ, որտեղից նրան «փակել» են: Իր հերթին, Մոսկուան մտադիր է Ատրպէյճանի ու թուրքիայի օգնութեամբ Հայաստանին վերջնականապէս գրկել ինքնիշխանութիւնից եւ դարձնել իր մասը: Ձուր է, որ Փութինը իր տարբեր բնոյթի ելուցներում միշտ «մոռանում» է Հայաստանը:

Հայաստանը ինքնիշխանութիւնից գրկելու ճանապարհին երկու խոչընդոտ է մնացել՝ Ղարաբաղն ու հայկական բանակը: Պէտք է կասկածել, որ Ղարաբաղի դէմ դիւերսիաները կը շարունակ-

ուեն ու աւելի լայնածաւալ բնոյթ ստանան: Ղարաբաղը պատմականորէն մնացել է ռուսական կայսրութեան «կոկորդոն», եւ նոյնիսկ այնպէս է ստացուել, որ այդ կայսրութեան ճակատագիրը կախուած է Ղարաբաղից: Թուրքն է անհեթեթութիւն է, սակայն աւելի մեծ անհեթեթութիւն է, քան ռուսական կայսրութեան քաղաքականութիւնը: Բացի այդ, Ղարաբաղն այն դէպքն է, որտեղ հայերը յաղթել են ոչ միայն առանց ռուսների օգնութեան, այլ ի հեճուկս ռուսների:

Բանակի դէմ արդէն գործում են, Դեկտեմբերի 23-ի յայտնի որոշումով: Ղարաբաղի «պատասխանատուութիւնն» էլ պէտք է ստանձնի Ատրպէյճանը, մանաւանդ որ ԵՏՄ-ի մէջ յայտնուած Հայաստանը սահմանափակուած է իր գործողութիւններում, այդ թւում Ղարաբաղի մասով:

Ատրպէյճանին պէտք է պատժել, ընդ որում՝ նրա իսկ տարածքում: Դա միակ բանն է, որ ազդում է Ատրպէյճանի քաղաքականութեան վրայ: Սահմանալի միջադէպերն ու զոհերն այդ ազդեցութիւնը չեն ունենում, այլ միայն նրա իսկ տարածքում կատարուած գործողութիւնները: Ընդ որում, այդ գործողութիւնների թւում պէտք է լինի տարածքների գրաւումը:

Ղարաբաղը ԵՏՄ անդամ է եւ չունի որեէ միջազգային ու «եւրասիական» պարտաւորութիւններ: Ղարաբաղի հարուածները համահունչ կը լինեն միջազգային քաղաքականութեան տրամաբանութեանը, քանի որ Ատրպէյճանը յայտնուել է այդ տրամաբանութիւնից դուրս՝ Ռուսաստանի քաղաքականութեան ծիրում:

«ԼՐԱԳԻՐ»

Ռ՛ւմ համար է գոհաբերվում Հայաստանի տնտեսութիւնը

ՄԱՐԿ ՆՇԱՆՅԱՆ

Դրամի փոխարժէքը կարծես թէ կայունացել է, բայց դա, ակնյայտօրէն թուացեալ կայունութիւն է: Բանն այն է, որ ամէն տարի այս օրերին սոլարի փոխարժէքը նուազում էր՝ մարդիկ ամանորեայ գնումների համար մանրում էին «բարձի տակ պահած» սոլարները, եւ եթէ այս տարի դա տեղի չի ունենում՝ նշանակում է գործ ունենք դրամի «թաքնուած արժեքը» հետ: Կենտրոնական բանկն, անկասկած, շատ լաւ գիտի սա, դրա համար էլ մի քանի օր առաջ (արդէն դրամի կայունացումից յետոյ) կարուկ բարձրացրեց վերաֆինանսաւորման տոկոսադրոյքը: Պարզ ասած՝ «թանկացրեց» փողը:

Տեսականօրէն ամէն ինչ կարծես թէ ճիշդ է: Որպէսզի դրամի փոխարժէքը կայուն լինի, անհրաժեշտ է պահպանել դրամի եւ սոլարի հաւասարակշռութիւնը: Եթէ սոլարը «քուլթիւն է անում», երկու ճանապարհ կայ. կամ աւելացնել սոլարի քանակը, կամ, եթէ դա հնարաւոր չէ, դրամի քանակը նոյնպէս պակասեցնել: Ըստ էութեան՝ ԿԲ-ն հենց սա էլ անում է: Բայց հարց է ծագում՝ այդ քայլի տուած օգո՞ւտն է շատ լինելու, թէ՞ վնասը: Փորձենք հասկանալ:

Չուտ տեսականօրէն՝ եթէ դրամի գնագոյծը պակասի, գնաձի տեմպերը կը մեղմուեն, այսինքն՝ գները «չեն թռնի»: Բայց սա՞ գուտ տեսականօրէն: Իսկ իրական կեանքը ցոյց է տալիս, որ Հայաստանում լայն սպառման ապրանքների (յատկապէս սննդամթերքի) գներն ամենեւին էլ շուկայական մեխանիզմներով չեն ձեւաւորուում: Մենաշնորհներ ունեցողներն ինչ գին ուզում՝ «կրա-

կում են»: Իսկ ուրիշ ի՞նչ պիտի անեն, եթէ մրցակցութիւն չկայ, համապատասխան յանձնաժողովն էլ, մեղմ ասած, չի աշխատում: Մի խօսքով՝ ակնկալուող դրական արդիւնքը կարող է եւ չլինել կամ շատ թոյլ արտայայտուել: Իսկ ահա բացասական հետեւանքները լաւ էլ կը զգացուեն: Եթէ կանխիկ շրջանառութեան մէջ դրամը «քուլթիւն է անում», բանկերն էլ վարկեր են տրամադրում չտեսնուած բարձր տոկոսներով, բնականաբար՝ տնտեսութիւնը չի աճում: Այլ կերպ ասած՝ Կենտրոնական բանկն իր այս որոշմամբ գիտակցաբար գնում է տնտեսական աճը կանգնեցնելու ճանապարհով: ԿԲ-ն համաձայն է, որ կոմերցիոն բանկերը տնտեսութիւնը չվարկաւորեն, միայն թէ գնաճը շատ բարձր չլինի:

Բայց Հայաստանը մի ուրիշ առանձնայատկութիւն էլ ունի: Բանն այն է, որ բանկերը մեզանում առանձնապէս չէին էլ վարկաւորում մասնաւոր բիզնեսը, բանկերի հիմնական «գործառնութիւնը» մարդկանց վարկաւորելն էր՝ հսկայական տոկոսներով հիպոթեկային ու սպառողական վարկեր էին տրամադրում: Իսկ մարդիկ այդ «կատաղած» տոկոսներով վարկերը վերցնում էին, որովհետեւ այլ ելք պարզապէս չունէին: Ընդ որում՝ հիմնականում վերցնում էին նախկինում վերցրած վարկերի տոկոսները մարելու համար, հակառակ դէպքում տուեն-տեղ կը կորցնէին ու կը յայտնուէին փողոցում: Իսկ եթէ մարդն այլ ելք չունի եւ ստիպուած է վարկ վերցնել, ի՞նչ տարբերութիւն՝ 23 տոկոսով է վերցնում, թէ՞ 26: Եթէ տանը ուտելու բան չկայ, ԴԱՀ կաշխա-

տակիցներն էլ ծեծում են դուռը, 26-ով չէ՞ 50-ով էլ կը վերցնի: Իսկ սա նշանակում է, որ ԿԲ որոշման արդիւնքում առանց այն էլ «տոկոսի տակ» յայտնուած ազգաբնակչութիւնն աւելի բարձր տոկոսների տակ է ընկնելու: Հետեւաբար՝ աւելի շատ մարդիկ են յայտնուելու փողոցում, աւելի շատ մարդիկ են արտագաղթելու եւ այլն: Եւ, բնականաբար, կտրուկ աւելանալու է նաեւ աղքատութեան տոկոսը: Եւս մի հետաքրքիր հանգամանք: Ուղիղ մի ամիս առաջ, երբ դրամն «առաջին փուլով» արժեքը կուէց, եւ սոլարի փոխարժէքը 410-ից բարձրացաւ 435-ի, Կենտրոնական բանկը յայտարարեց, թէ դա խիստ բարենպաստ է տնտեսութեան համար, Հայաստանի տնտեսութիւնն աւելի մրցունակ կը դառնայ, արտահանողների համար բարենպաստ պայմաններ կը ստեղծուեն եւ այլն: Ի՞նչը փոխուեց այս մի ամսուկ ընթացքում, որ ԿԲ-ն որոշեց տնտեսական զարգացման հեռանկարների հաշուին «կայունացնել» դրամի փոխարժէքը, այսինքն՝ գնալ ճիշտ հակառակ ուղղութեամբ: Կարկառուն հանրապետականները պնդում են, թէ Ֆինանսական դաշտը ցնցումներից դուրս եկաւ Սերժ Սարգսեանի միջամտութիւնից յետոյ: Չլինի՞ խոշոր ներկրողները «ձեռի հետ էլ» կարողացան համոզել նրան, որ իրենց շահոյթները տնտեսական աճից աւելի կարեւոր են: Նման մի բան հաստատ եղել է, այլապէս ԿԲ-ն դրամն արժեւորելու ուղղութեամբ կտրուկ քայլեր չէր անի, այն էլ՝ խուճապը հանդարտուելուց մի քանի օր անց:

«ՉՈՐՐՈՐԻ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

Մամիա
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՎԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարմազանով.- «Ներքաղաքական Կուրսը Կը Շարունակուի»

Հայաստանի հանրապետական կուսակցության քայլերը պայմանավորված չեն խորհրդարանական քառակուսի գործունեությամբ: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է Հայաստանի ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ մամուլի քարտուղար Էդուարդ Շարմազանովը՝ կանխատեսելով 2015-ի ներքաղաքական գործընթացները:



ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

Նրա խօսքով՝ խորհրդարանական եռեկողմ միասնական կառույց է, քանի որ եռեկողմ ներսում մի շարք տարածայնություններ կան, այդ թվում հետագայ գործողությունների ռազմավարության հետ: Այդ առումով, Շարմազանովի կարծիքով, դժուար է նախապես կանխատեսել եռեկողմ հետագայ քայլերը: Բացի այդ, ՀՀԿ-ի գործողությունների ռազմավարությունը որեւէ կերպ պայմանավորված չէ եռեկողմ կամ քառակողմ գործունեությամբ:

«Մենք ունենք գործողությունների ծրագիր՝ ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը, ԱԺ-ն հաստատել է 2015-ի պետական բիզնեսին, երկիրը անդամակցել է ԵՏՄ-ին: մենք շարունակում ենք իրականացնել մեր օրակարգը, իհարկէ, հաշուի առնելով ընդդիմության

կառուցողական առաջարկները: Մենք պատրաստ ենք երկխոսություն»:

Միաժամանակ, Շարմազանովը նշել է, որ ցանկացած դեպքում՝ ընդդիմությանը պետք է չի լինի այն մասին, որ իր գործողությունները պետք է տեղափոխվեն Մասնաշարժի շրջանակներում:

Նա նաև ընդգծել է, որ Հայաստանի առաջնահերթ խնդիրը հարեւան Ադրբեյջանի հետ խաղաղությունն է, ինչը թոյլ կը տայ շարունակել բարեփոխումները երկրում:

Դիւերսանտներից Մէկը Դատապարտուեց Ցմահ, Միւսը՝ 22 Տարուայ Ազատագրկման

Լեռնային Ղարաբաղի ընդհանուր իրաւաստութեան առաջին ատենախնդարում հրապարակեց անցած Յուլիսին ԼՂ պետական սահմանը ապօրինաբար հատած երկու ադրբեյջանցիների՝ Շահբազ Գուլիեւի եւ Դիլհամ Ասկերովի դատապարտումը:

Դիլհամ Ասկերովը դատապարտուեց ցմահ, իսկ Շահբազ Գուլիեւը՝ 22 տարուայ ազատագրկման՝ լրտեսութեան, առանց պատշաճ թոյլտուութեան Լեռնային Ղարաբաղի պետական սահմանը հատելու, ապօրինի կերպով հրազէն եւ ռազմամթերք կրելու, մարդուն բացառապէս առեւտրային եւ սպանութեան համար:

Լեռնային Ղարաբաղի նախագահի մամուլի իսուսակ Դաւիթ Բաբեանը փոխանցեց, որ դատավարութիւնը անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, բաց ու թափանցիկ - «Այդ մարդիկ ունեցել են իրենց դատապաշտպաններին: Անկախ նրանից, ինչքան էլ որ դա հոգեբանօրէն դժուար չլիներ, ինչքան էլ որ նրանց դէմ բողոքակ մեղադրանքները հիմնաւորուած չլինէին, միեւնոյն է, Արցախի հանրապետութիւնը, լինելով ժողովրդավարական պետութիւն, որեւէ խտրականութիւն աչտեղ չի ներկայացրել, չի կիրառել, եւ այդ մարդիկ ստացել են այն պատիժը, որում նրանց մեղադրում էին, եւ որեւէ կողմնապահ մօտեցում եւ այլն, այստեղ չկայ: Ուղղակի նրանց յանցանքները այնքան ծանր էին, որ նրանք ստացան այդպիսի պատիժ»:

Դատապարտեալները մէկամսեայ ժամկէտում կարող են վճիռը բողոքարկել Լեռնային Ղարաբաղի վերաքննիչ դատարանում:

Հարցին, թէ հնարաւոր է արդեօք, որ պաշտօնական Բաբեան ղիմի Ստեփանակերտին՝ ադրբեյջանցիներին արտաքանձաման հարցով, Հայաստանի կառավարութեանն առնթր գերիներին, պատանդներ

րի եւ անհետ կորածները հարցերով զբաղուող աշխատանքային խմբի ղեկավար Արմէն Կապրիէլեանը պատասխանեց - «Ադրբեյջանի իշխանութիւնները կտրականապէս հրաժարուում են ճանաչել Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան պետութիւնը եւ համապատասխան իշխանութիւններին: Ո՞ւմ պէտք է նրանք դիմեն: Այդ անձինք Հայաստանի Հանրապետութիւնում չեն դատապարտուել, Հայաստանի Հանրապետութեան տարածքում չեն յանցագործութիւն կատարել, Հայաստանի Հանրապետութեան քրէական օրէնսգրքի նկատմամբ ոտնձգութիւն չեն կատարել: Այդ ամէն ինչը Լեռնային Ղարաբաղի տարածքում է տեղի ունեցել: Արդեօք Ադրբեյջանի իշխանութիւնը կը գնայ այդ քայլին՝ կողմնակիօրէն ճանաչելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւններին ղեկ ժուրէ, որպէսզի յանձնման մասին միջնորդութեամբ դիմի Լեռնային Ղարաբաղի համապատասխան իշխանութիւններին: Այս իրաւական հարցը ինչ-որ միջազգային ատենաների ասպարէզում չի գտնուում: Այստեղ երկկողմ յարաբերութիւնների ինդիք է»:

Հայաստանի մարդու իրաւունքների նախկին պաշտպան Լարիսա Ալաբերդեանի կարծիքով, այս դիւերսիան տուեալներ հաւաքագրելուց բացի, քաղաքական նպատակով է իրականացուել: Ըստ իրաւապաշտպանի, հիմա Բաբեան կարող է յայտարարել, որ հայկական կողմը մարդկանց ազատագրկում է՝ գոյութիւն չունեցող սահման անցնելու համար:

Ելնելով Ադրբեյջանի դրեւորած պահուածքից, երբ մարդասպանութիւն իրականացրած Ռամիլ Սաֆարովը Եւրոպայից տեղափոխուեց Ադրբեյջան եւ այնտեղ հերոսացուեց, Լարիսա Ալաբերդեանը գտնում է, որ արդարացի կը լինի, եթէ դատապարտեալները պատիժը կրեն Լեռնային Ղարաբաղում:

«Այս Տարի Պէտք է Բացառուի Լրագրողի Նկատմամբ Բռնութիւնը».- Աշոտ Մելիքեան

Ըստ Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեանի՝ հայաստանեան լրատուամիջոցները 2014թ-ին գործել են բաւական լարուած պայմաններում, ընդ որում, իշխանական տարբեր ատենաներ յաճախ տարբեր տեսակի ճնշումներ են գործադրել ու բարդութիւններ են առաջացրել:



Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեան

«Մասնաւորապէս պէտք է յիշեցնեմ, երբ տարեկաբին նախաձեռնուեց տիրահազակ ֆէյքերի մասին օրէնքի նախագիծը, որը լրագրողական համայնքի մեծ ջանքերի շնորհիւ էր, որ դրուեց մի կողմ, բայց այդ վտանգը բաւականին լուրջ էր: ՀՀ դատախազութիւնը հարորդագրութիւններով յիշեցնում էր, որ առանց թոյլտուութեան նախաքննութեան վարտիք հրապարակելը քրէօրէն պատժելի է, ինչին հետեւեցին յատուկ քննչական ծառայութեան պահանջները որոշ լրատուամիջոցներին՝ բացառապէս իրենց տեղեկատուութեան աղբիւրը», - Tert.am-ի հետ զրույցում ասաց նա:

Աշոտ Մելիքեանը յիշեցրեց, որ ի վերջոյ կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւաստութեան դատարանը որոշում էր կայացրել լրատուամիջոցներին պարտաւորեցնել բացառապէս աղբիւրը:

«Նրանք հաշուի չեն առել ԶԼՄ-ների մասին այն օրէնքը, համաձայն որի՝ դատարանը լրատուամիջոցից կարող է պահանջել բացառապէս աղբիւր միայն ծանր եւ առանձնակի ծանր յանցագործութիւնների դէպքում, այն էլ երբ

Գողականները Հայաստանում Պատմական Հաւաք Եւ Անցկացում

Հայկական լրատուամիջոցներն աւետում են, որ Հայաստանում մեկնարկել է «օրէնքով գողերի» պատմական մեծ հաւաքը, Կոտայքի մարզի հանգստավայրերից մէկում: Կայքի տեղեկութիւններով՝ իրաւապահ մարմինները տեղեակ են հաւաքից, եւ այն լիովին «վերահսկուում է»:

Ուշագրաւ է, որ հայաստանեան գողական հաւաքի մասին առաջինը յայտնել են ռուսական լրատուամիջոցները: «Պրայմ Կրայմ» գործակալութիւնը տեղեկացնում է, որ Յունուարի 5-ին Հայաստանում մեկնարկել է մեծամասշտաբ գողական հաւաք, որը պէտք է տեղի ունենար Մոսկուայում: Որոշուել է գողական հաւաքը կազմակերպել Երեւանում, քանի որ Ռուսաստանի իրաւապահները ուժեղացրել էին վերահսկողութիւնը: Լրատուամիջոցի տեղեկութիւններով՝ Երեւան ժամանածների մեծ մասը անդրկովկասեան ժողովուրդների ներկայացուցիչներ են, թէեւ սլավոնները նոյնպէս քիչ թիւ չեն կազմում: Օրինակ՝ Յունուարի 4-ին Մոսկուայից Երեւան միեւնոյն ինքնաթիռով ժամանել են Շիշկանյու Շաքրոն, որը համարուում է հաւաքի նախաձեռնողներից:

Նրանց են միացել նաեւ Չեբուրաշկան ու Միրիչը, սպասուում է նաեւ Դեդ Հասանի «սլավոն» ժառանգորդների՝ Պիչուգայի ու Վոսկրեսի ժամանումը:

Մինչ այդ, «Պրայմ Կրայմ» գործակալութեանը յայտնի են դարձել կայանալիք հաւաքի որոշ մանրամասներ: Մասնաւորապէս, ամենախիստ պատժի կարող են

ենթարկուել նրանք, որոնք կասկածի տակ են դրել էրիկ Ասատրեանի լրագրութիւնները: «Ռիսկի խմբում» է յայտնուել մի ամբողջ խմբաւորում, որը նախկինում դեկավարում էին կարգաւ եղբայրները, իսկ ներկայումս նրանց պաշտօնաթողութիւնից յետոյ այն անցել էր Գեղայի աներոջ՝ Մերաբ Մզարեւուայի վերահսկողութեան ներքոյ: Վերջինս, ըստ չճշողւած տեղեկութիւնների, հրաժարուել է Հայաստան մեկնել առողջական խնդիրների պատրուակով:

Յայտարարուել է նաեւ, որ հաւաքի ընթացքում վերջին 5 տարուայ «գողական կազմերի» ստուգումներ են սպասուում:

Յատկանշական է, որ տեղապատուական նման լայն արտահոսքը ՀՀ ոստիկանութեան կողմից որեւէ արձագանքի չի արժանացել: Փաստօրէն, օրէնքով գողերը, իրաւապահների խտացուած վերահսկողութիւնից ելնելով, չեն համարձակուել հաւաքուել Մոսկուայում, ինչը նշանակում է, որ նրանք համապատասխան մարմիններից անվտանգութեան երաշխիքներ չեն կարողացել ստանալ: Անշուշտ հետաքրքրական է, թէ ինչու է որոշուել հաւաքի վայրը ընտրել Երեւանը: Նշանակուում է սաարդեօք, որ անվտանգութեան այն երաշխիքները, որ չեն տրուել Մոսկուայում, սպահովուել են Երեւանում: Եթէ՛ այդ, սպա Հայաստանի ոստիկանութիւնն չի մտահոգում իր վրայ վերցնել յանցաշխարհի հետ համագործակցելու պիտակը: Ամէն դէպքում, ոստիկանութիւնը չի հերքել ռուսական գործակալութեան տարածած տեղեկատուութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Եարոն Վեյս.-

«Արդարացում Չկայ, Որ Իսրայելը Չի ճանաչել Հայոց Ցեղասպանությունը»

Յայտնի իսրայելցի հայամէջտ ակտիվիստ Եարոն Վեյսը Հայաստանն ու Արցախը համարում է երկրային դրախտ եւ կարծում է, որ իր երկիրը չպէտք է գէնք առաքի Ադրբեյջանին, որը բացայտ սպանում է իր հարեւան երկրին: Եարոն Վեյսը պնդում է, որ ոչ մի արդարացում չկայ, որ Իսրայելը մինչ օրս չի ճանաչել հայոց ցեղասպանությունը:



Իսրայելցի հայալէտ ակտիվիստ Եարոն Վեյս

Այս ամէնի մասին՝ Իսրայելում «Նոյեան Տապան» հայկական մշակութի հայկական կենտրոնի մամուլի առաջէ Մենդել կորուսանկիրն տուած հարցազրոյցում, որը NEWS.am-ը ներկայացնում է ամբողջութեամբ:

-Եարոն, նախեւառաջ պատմե՞ք մի փոքր Ձեր մասին:

-Ես ապրում եմ Իսրայելի Հիւսիսում գտնուող ոչ մեծ քաղաքում, ամուսանցած եմ, ունեմ 4 երեխայ: Տուրիստական սեզոնին աշխատում եմ Հայաստանի ու Վրաստանի տարածքում: Իսկ ընդհանրապէս աշխատում եմ մեծ հեռուստահաղորդակցական ընկերությունում: Ազատ ժամանակ ես խորհուրդներ եմ տալիս զբօսաշրջիկներին, որոնք պլանավորում են այցելել Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ, ինչպէս նաեւ աջակցում եմ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում որոշման կայացմանը եւ Ադրբեյջանին գէնքի վաճառքի կանխմանը:

-Դուք շատ էք ճանապարհորդում Հայաստան եւ Արցախ, ինչպիսի՞նք են Ձեր տպավորութիւններն այդ երկու պետութիւններից:

-Ինձ համար Հայաստանն ու Արցախը երկրային դրախտ են: Հայկական հիւրընկալութիւնը աշխարհում լաւագոյններից մէկն է: Հայաստանի բնապատկերները հիասքանչ են, հարուստ մշակոյթ եւ զարմանալի պատմութիւն: Այդ ամէնը Հայաստանը դարձնում են աշխարհում ամենագրաւիչ երկրներից մէկը՝ զբօսաշրջութեան հսկայական ներուժով:

-Ե՞րբ եւ ինչպէ՞ս էք սկսել հետաքրքրուել հայոց ցեղասպանութեամբ:

-Իմ Հայաստան այցելութիւնից եւ այդ թեմայով բազմաթիւ գիտական աշխատութիւններ ու գրքեր ընթերցելուց յետոյ ինձ համար ամօթ էր, որ իմ երկիրը չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը: Հորոքոստ ապրած հրեաները պէտք է ճանաչեն յանցագործությունը, որն իրականացուել է այլ ազգերի նկատմամբ: Չկայ որեւէ արդարացում, որ Իսրայելը մինչ օրս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Դրա համար ես ուզում եմ փոխել այդ իրավիճակը:

-Վերջերս Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինը հրաժարուեց ստորագրել Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու յանձնագիրը, թէեւ նա մինչ այդ միշտ պաշտպանել էր այդ գաղափարը: Կը ցանկանայի իմացալ ձեր կարծիքն այդ առնչութեամբ:

-Ես խորապէս հիասթափուել էի, երբ իմացայ, որ ներկայ նախագահ Ռեուվեն Ռիվլինը հրաժարուել է ստորագրել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու յանձնագիրը: Կարծում եմ, որ նա այդպէս է արել քաղաքական ճնշման հետեւանքով, բայց ես կասկածներ ունեմ, որ դեռ կը զարմացնի մեզ ապագայում եւ նրա հրաժարումը այս պահին քաղաքական խաղի մի մաս էր:

-Հայոց ցեղասպանութեան 99-րդ տարեկից ժամանակ, որը նշուեց 2014-ի Ապրիլի 24-ին, թել Աւիւում Թուրքիայի դեսպանատան առջեւ, դուք ելոյթուն կոչ արեցիք Իսրայելի իշխանութիւններին դադարեցնել զենքի մատակարարումը Ադրբեյջանին: Կը խնդրեի մեկնաբանել ձեր խօսքը:

-Համաշխարհային մամուլի հաղորդագրութիւններից սպաւորութիւն է ստեղծուել, որ Իսրայելը Ադրբեյջանին գէնքի ամենախոշոր մատակարարներից մէկն է: Իսկ Ադրբեյջանը բացայտ յայտարարում է, որ իրեն գէնքը պէտք է հարեւան երկրի վրայ յարձակուելու համար: Հայաստանը չի սպաւորում Ադրբեյջանին, ուստի ես համակրում եմ հայ ժողովրդին եւ չեմ կարող ընդունել այդ փաստը, որ իմ երկիրը Հայաստանի թշնամիների շարքում է: Իսրայելցի ժողովուրդը չգիտի ճշմարտութիւնը, եւ մեր խնդիրն է պատմել այդ մասին:

-Եարոն, անձամբ Դուք ինչ կը ցանկանայիք հայ ժողովրդին մօտ ապագայում:

-Հայ ժողովուրդը միշտ եղել է ամենակրթուած եւ աշխատասէր ժողովուրդներից մէկը: Հայաստանը շինարարների երկիր է: Ես հաւատում եմ, որ մօտ ժամանակներս Հայաստանի համար բարգաւաճման շրջանը կը սկսուի, եւ նա կը կարողանայ վերագրաձենել իր երբեմնի փառքը:

Բրիտանիայի Դեսպանը Հայ-Թուրքական Հաշտեցման Ուղղութեամբ Քայլերի Յոյս Ունի

Բոլոր նրանք, որոնք, Մեծ Բրիտանիայի նման, իրենց համարում են ե՛ւ Թուրքիայի, ե՛ւ Հայաստանի ընկերը, հայ-թուրքական հաշտեցման գործընթացում առաջընթացի յոյս ունեն: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ եւ լիազօր դեսպան Քեթրին Լիչը՝ անդրադառնալով հարցին, հնարաւոր է, արդեօք, 2015 թուականին հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում որեւէ առաջընթացի հասնել՝ չնայած այն հանգամանքին, որ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարեկիցի նախաշեմին էլ Անկարան շարունակում է հերքել սեփական պատմութիւնը:



Հայաստանի մօտ Մեծ Բրիտանիայի դեսպան Քեթրին Լիչ

«Մենք ակտիւօրէն սատարում էինք 2009 թուականի արձանագրութիւնները եւ կոչ էինք անում դրանք վաւերացնել՝ առանց որեւէ նախապայմանի: Յատկապէս Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարեկիցի տարուայ ընթացքում մենք մեր դերը տեսնում ենք նրանում, որպէսզի անենք հնարաւոր ամէն ինչ՝ հայ-թուրքական հաշտեցմանն աջակցելու համար: Մենք ընդունում ենք երկու երկրների՝ սեփական պատմութեանն աւերեսուելու եւ առաջընթացի ուղի գտնելու կարելուութիւնը», - ասաց Քեթրին Լիչը՝ յաւելելով, որ յոյս ունեն, որ 2015 թուականին համապատասխան քայլեր կը ձեռնարկուեն:

Յիշեցնենք, որ հայ-թուրքական յարաբերութիւնների բարելաւման գործընթացը սկսուեց 2008 թուականի աշնանը, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ: 2009-ի Հոկտեմբերի 10-ին Հայաստանի եւ Թուրք-

իայի ԱԳ նախարարներ էդուարդ Նալբանդեանն ու Ահմեդ Դավութօղլուն Յիւրիխում «Դիւանագիտական յարաբերութիւնների մասին արձանագրութիւն» եւ «Երկկողմ յարաբերութիւնների զարգացման մասին արձանագրութիւն» ստորագրեցին, որոնք պէտք է վաւերացուէին երկու երկրների խորհրդարանների կողմից: Սակայն արդէն 2009 թուականի Դեկտեմբերին Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Թայյիպ էրդողանը յայտարարեց, որ Անկարան արձանագրութիւնները չի վաւերացնի՝ առանց դաւաբանական հակամարտութեան կարգաւորման: 2010 թուականի Ապրիլի 22-ին Սերժ Սարգսեանը յայտարարեց հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացման գործընթացը կանգնեցնելու մասին՝ փաստելով, որ Թուրքիան պատրաստ չէ շարունակել սկսուած գործընթացը: Փաստաթղթերի վաւերացման գործընթացը Թուրքիայի խորհրդարանում նոյնպէս սառեցուած է:

100-Ամեակին Ընդառաջ Գերմանական Բոխումում Տնկուելու Է 150 Սոսի

Հայ-գերմանական բարեկամութիւնը ամրապնդելու համար՝ Գերմանիայի Բոխում քաղաքում, Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ տնկուելու է մօտաւորապէս 150 սոսի: Այս մասին Դեկտեմբերի 30-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց «Գերմանիայի Հայ Ակադեմիականների Միութիւն -1860» գիտամշակութային կազմակերպութեան նախագահ Ազատ Օրդուխանեանը:

«Մեր միութեան 150-ամեակի եւ Ցեղասպանութեան 100-ամեակի կապակցութեամբ ցանկանում ենք 150 սոսի տանել Հայաստանից եւ տնկել Բոխում քաղաքում՝ ստեղծելով հայկական պուրակ, որտեղ հետագայում կը կազմակերուեն միջոցառումներ», - ասաց Ազատ Օրդուխանեանը:

Գիտամշակութային կազմակերպութեան նախագահի խօսքով, միջազգային հանրութեանը Ցեղասպանութեան եւ հայ ժողովրդի մասին պէտք է տեղեկացնել գիտութեան եւ գրքի միջոցով:

«Ցեղասպանութեան 100-ամեակին չենք ցանկանում խաչքարային ստանդարտ ձեւով մօտենալ, այլ ցանկանում ենք Բոխումի քա-

ղաքապետարանի դահլիճներից մէկի դիմաց՝ մեծ մարմարէ սրահում կանգնեցնել զրքի չուշարձան, որի հեղինակը քանդակագործ Մարիետա Արմենյան կը լինի: Քանդակը ժայռի մէջ ձեղքուած զրքի տեսքով է լինելու, որը խորհրդանշում է մեր հակական լեռնաշղթան», - ասաց Ազատ Օրդուխանեանը՝ նշելով, որ իրենք ցանկանում են խաչքարը փոխել զրքով:

Ազատ Օրդուխանեանի խօսքով, նրանք Գերմանիայում թուրքական համայնքի կողմից երբեմն խոչընդոտների են հանդիպում:

«Լինում է մշակութային, կամ այլ տիպի միջոցառումներ, որոնք մենք կազմակերպում ենք բաց դահլիճներում եւ մարդիկ ազատ կարող են գալ եւ նստել: Շատ դէպքերում դահլիճի տարբեր հատուածներից տարբեր ձայներ ենք լսում, եւ զգում ենք, որ ցանկանում են խոչընդոտել», - ասաց Ազատ Օրդուխանեանը՝ նշելով, որ չնայած թուրքական համայնքը բաւականին հզօր է, սակայն գերմանահայ համայնքը եւս բաղկացած է մօտաւորապէս 40 հայկական կազմակերպութիւններից եւ միութիւններից:

Հայ-Ատրպէյճանական Սահմանին

Շարունակուած էջ 1-էն

Յունուար 3-ին երկու հայ զինծառայող զոհուած է, մէկն ալ վիրաւորուած, Ղարաբաղի Պաշտ-

պանութեան Բանակի հարաւային եւ արեւելեան ուղղութիւններով ատրպէյճանական կողմի ձեռնարկած հետախուզական երկու գործողութիւններու հետեւանքով:

ԱՄՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Եւ զգեմուլ զՆոր Մարդն որ ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ նշմարտութեանն»: (Եփես. 4:24)

Նոր Տարին եւ Սբ. Ծնունդը երկու հազարամեակ շարունակ մարդուն կեանքը բարձրացուցած են նոր մակարդակի մը, հոգեւոր եւ բարոյական պատուանդանի մը վրայ, որ կ'առաջնորդէ մարդս առ բարձրեալն Աստուած: Եթէ հաստատօրէն վճռենք վերափոխել մեր կեանքին ընթացքը՝ հաստատելով զայն Քրիստոս Աստուածորդու վրայ, անպայմանօրէն մեր հուլիանը մէջ պիտի գտնուի նոր մարդուն ծնունդը: Որովհետեւ, եթէ անհատին եւ հաւաքականութեան կեանքը մնայունօրէն պիտի չառաջնորդուի դէպի նոր մակարդակ, ապա մարդուն կեանքը չի կրնար ինքզինք գերազանցել եւ բարձրանալ առ Աստուած:



Լատքի եռանդով եւ տեսիլքի գիտակցութեամբ՝ նոր ժամանակը ապրելու համար ստեղծագործ կեանքով:

2015-ը, մեր Թեմական կառուցչին ներս պիտի ըլլայ նաեւ Երիտասարդութեանը նուրիւնած տարի: Մենք կը հաւատանք, որ Հայոց Յեղասպանութեան 100 ամեակի ոգեկոչումները իսկապէս կ'իմաստաւորուին, երբ մեր երիտասարդները նոր ձեռքբերումներ կ'արձանագրեն, կը յառաջդիմեն կեանքի գանազան մարզերէն ներս, բարձրունքներ կը նուաճեն գիտութեան, մշակոյթի եւ այլ ոլորտներու մէջ՝ անպայմանօրէն Մայր Հայրենիքին եւ Սբ. Էջմիածնին պատկանելու հոգեւոր գիտակցութեամբ: Այսպիսով կրնանք երաշխաւորել յաւերժականութիւնը մեր ազգի ու Եկեղեցւոյ: Գալիք տարին մեր Թեմական կեանքին մէջ պիտի ըլլայ լուսաւոր տարի մը, որովհետեւ հայ երիտասարդութեան վերագարթօնքով է պայմանաւորուած նաեւ մեր ազգի կեանքին մէջ լոյսի ճանապարհը: Մեր հոգու պարտքը պիտի ըլլայ առաջնորդել հայ երիտասարդը դէպի Աստուած, դէպի քրիստոնէական հաւատքի կեանք, դէպի Հայաստան, դէպի Սբ. Էջմիածին, դէպի հոգեւոր ու բարոյական արժէքներով հարուստ կեանք՝ Աստուծոյ փառքին համար, մեր բազմաչարչար ժողովուրդի մխիթարութեան համար: Երիտասարդութիւնն է մեր յոյսի ու լոյսի փարոսը, որ փառաւոր գալիքի խոստում կը ցոլացնէ անցեալի հորիզոնին վրայ:

Սիրելի՛ հաւատաւոր եւ նուիրեալ գաւազներ մեր Սբ. Եկեղեցւոյ, ձեզի կը մաղթենք քաջառողջ երկար կեանք, բեղմնաւոր գործունէութիւն, եւ յարատեւ յաջողութիւն ձեր բոլոր առաքելի գործերու մէջ: Կը հայցենք Ամենակալին, որ ինք ըլլայ ամենքիս օգնական եւ առաջնորդ գալիք 2015-ին՝ մեր կեանքին մակոյղը ապահով հասցնելով դէպի բարի նաւահագորտ: Ծնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:

Աղօթարար,

ՅՈՒՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ

ՀԻՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՍՈՒՐԱՏԵԱՆԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Որովհետեւ ջուր քիչեցաւ անապատի մէջ եւ գետ՝ ծարաւուտ երկրի վրայ... Միփարուեցէ՛ք խոնաված սրտեր. քաջալերուեցէ՛ք ու մի՛ վախճա՛ք: Ահա աստիկ մեր Աստուածը դատաստանով պիտի հատուցանէ. ինքն անձամբ պիտի գայ ու մեզ փրկէ»: (Եսայի 35, 1-10)



Գերջարգելի եւ գերապատիւ վարդապետներ, Առաքինազարդ քոյրեր, Յոյժ սիրելի հաւատացեալներ,

Այս օրերու քաղաքական եւ տնտեսական ճգնաժամին՝ մեր Թեմին հաւատացեալներէն շատերը, մանաւանդ անոնք, որոնք հարազատներ ունին Միջին Արեւելքի մէջ (Իրաք, Սուրիա եւ Լիբանան) դիմեցին մեր խորհուրդին: Ոմանք հարց տուին թէ՛ «Ինչպէ՞ս կրնանք ապրիլ եւ կիսել Սուրբ Ծնունդի ուրախութիւնը այս տառապանքներով եւ անապահովութեամբ, որոնք կը լուրջեն ու կը վրդովեն մեզ... դէ՛ լուրերը, գորս կը կարդանք թերթերուն մէջ եւ կը տեսնենք հեռատեսիլներէն... մեր հարազատ եղբայրներն ու քոյրերը, որոնք ամէն օր կը հալածուին ու կը զոհուին իրենց քրիստոնէական հաւատքին համար՝ քաղաքական եւ տնտեսական ծանր պայմանները, երիտասարդներուն անգործութիւնը, աղքատութեան աճը...»:

Կեանքի ամէնօրեայ անորոշութիւնները եւ մտահոգութիւնները կը հիւժեն ներքին խանդը եւ կը տկարացնեն յոյսը: Որպէս մարդ,

երբեմն կարիքն ունինք հոգեւոր կազմակերպման: Կարիքն ունինք վերանորոգուելու հոգեպէս եւ ամբողջութեամբ համոզումներով գորացած սրտով շարունակելու մեր կեանքին ու խոստովանութիւնը:

Երբ, Սուրբ Ծնունդեան օրը, Սուրբ Կոյս Մարիամը ծննդաբերեց Յիսուսը եւ գետեղեց զինք մտուրին մէջ՝ իրականացաւ ինչ որ Տէրն ըսած էր Եսայի մարգարէին բերնով. «Որովհետեւ Չուր բխեցաւ անապատի մէջ եւ գետ՝ ծարաւուտ երկրի վրայ...»: Այն սուրբ օրը, Աստուած մարդկութեան համար խաղաղութեան ու վասիս մը ստեղծեց Բեթղեհէմի մէջ՝ ուր ուղղուեցան յոգնած ու ծանրաբեռնուած հովիւները եւ Մոգերը, որոնք յոյսի նշոյլ մը կը փնտռէին: Անոնք, Սուրբ Կոյս Մարիամի եւ Յովսէփի ներկայութեան, Մանուկ Յիսուսը

Շաբ.ք էջ 19

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԳՈՄԻՆ ՄԷՋ ԾՆԱԾ ՄԱՆՈՒԿԸ

Ս. Ծննդեան մասին բազմաթիւ պատմութիւններ գրուած են, բայց անոնցմէ ոչ մէկը այնքան գեղեցիկ եւ նշանակալից է, որչափ այն պատմութիւնը, որ կը կարդանք Աւետարան Ըստ Մատթէոսի եւ Ղուկասի առաջին գլուխներուն մէջ:

Այնտեղ պարզապէս մը կայ, որ գուցէ երբեմն մեր ուշադրութենէն կը վրիպի, սակայն եւ այնպէս սրտառու է եւ այժմէական պատգամ մը կը հաղորդէ: Ասիկա Յիսուս Մանուկին գոմի մը մէջ ծնած ըլլալու եղելութիւնն է:

Յիսուսի ծննդեան պատմութիւնը ծանօթ է: Օգոստոս կայսրի հրովարտակով, Հռոմէական կայսրութեան ընդարձակ տարածքին՝ մարդահամարի պատրաստութիւններ տեղի կ'ունենային: Յովսէփ եւ Մարիամ Նազարէթ քաղաքէն Բեթղեհէմ եկած էին մարդահամարի արձանագրութեան համար: Մարիամ յղի էր եւ իր ծննդաբերութեան օրերը մօտեցած էին: Երկար ճամբորդութենէ մը յետոյ, Բեթղեհէմ հասած էին եւ իջեւանելու տեղ կը փնտռէին, բայց պանդոկին մէջ տեղ չկար: Անոնք ստիպուեցան ապաստան գտնել գոմի մը մէկ անկիւնը:

Գոմը, ընտանի անասուններու բնակարանն էր, եւ բնականաբար աղտոտ եւ անյարմար վայր մըն էր մարդոց կեցութեան համար: Կրնանք երեւակայել հոգեկան տագնապը եւ ֆիզիքական նեղութիւնը Մարիամի եւ Յովսէփի այդ անբաղձալի կացութեան մէջ: Ահա այդ պայ-



մաններուն մէջ, աղտոտ ախոռի մը մէկ անկիւնը Մարիամ ծնունդ կու տար իր անդրանիկ գաւկին: Այսպէս, նորածին Յիսուս Մանուկը իր աչքերը առաջին անգամ կը բանար անհիւրընկալ եւ գարշահոտ գոմի մը մէջ:

Քիչեր գիտէին, որ գոմի մէջ ծնող այդ հրաշալի Մանուկը կոչուած էր մարդկութեան մեծագոյն բարերարն ու փրկիչը ըլլալու: Դժբախտ պարագաներու մէջ ծնող Բեթղեհէմի այդ անսման Մանուկը եթէ լեզու ունենար խօսելու, պիտի ըսէր. «Այս ինչ անգութ եւ մեղաւոր աշխարհ մըն է՝ ճիշդ անոր համար Ես աշխարհ եկայ մեղաւոր մարդկութիւնը իր մեղսալից վիճակէն ազատելու»:

Գոմի մը մէջ ծնած Բեթղեհէմի Մանուկը, որ մարդկութեան Փրկիչը պիտի ըլլար՝ Սրտառու է,

Շաբ.ք էջ 19

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՄԵԼՔՈՆ ՄԻՐՍԱԴՊՅԵԱՆ (ԱԶԱՏ ՈՍՏԱՆԻԿ)

ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան վարդապետ ֆետայիններէն է Ազատ Ոստանիկ, որուն սպանութիւնը պէտք է ըլլար լուրջ անհաւանգ մը գալիք փոթորիկին հանդէպ: Այդ եղաւ կիսով չափ:

Ա. Ոստանիկ ծնած է Վանի մօտ Կեմ գիւղը, 1873ին(1), հա մեստ ընտանիքէ: Քանի մը տա ըր քաղաքամէջի Յիսուսեան Վարժարանը յաճախելէ ետք կը հետեւի արհեստի(2):



Րողարձներ:

Օսմանեան սահմանադրութեան առիթով ազատ արձակուելէն ետք, Ա. Ոստանիկ կը վերամասնակցի ազգային-հասարակական կեանքին: Կուսակցութեան կողմէ կը նշանակուի Կեսարիոյ շրջանի գործիչ:

Ան, առաջին օրէն ուշադրութիւն կը դարձնէ ինքնապաշտպանութեան միջոցներու ապահովման աշխատանքին: Այդ օրերու ահա նատեալ կը վկայէ.- «Բայց ինչ հարկ կար գէնքերու պատրաստութեան, քանի որ «Ազատութիւն Արդարութիւն եւ Հաւասարութիւն հռչակուած էր» թերեւս խորհին ոմանք: Կը յիշեմ այդ օրերուն, ուսուցիչ ընկերներու ժողովի մը մէջ, ուր ներկայ էին Մինաս Մինասեան (Կէմէրէկցի), Օննիկ Եղիազարեան (Քսաններէն.-Ե.Ճ.) վահան Ամատունի (Մեծ Եղեռնի նահատակ.- Ե.Ճ.) Օննիկ Պոյաճեան եւ Մինաս Պետրոսեան (Ասուպ, Մեծ Եղեռնի նահատակ.- Ե.Ճ.): Մեզմէ մէկը նոյն հարցումը ուղղեց Ազատ Ոստանիկին, որու պատասխանը, մօտաւորապէս հետեւեալն եղաւ.-

«Ընկերներ, մենք ազատութեան գիտնորներ ենք եւ վախ չունինք ազատութեան պաշտպաններէն: Բայց ո՞վ ըսաւ, թուրքը մէկ օրէն միւսը կըրցաւ Ազատութեան հերոս դառնալ: Պահ մը հաւատանք որ այդ «հրաշքը» պատահեցաւ, մենք բան մը չենք կորսնցներ, թող մեր գէնքերն ալ փճանան: Բայց եթէ հակառակը պատահի, մենք պատասխանատու կը մնանք պատմութեան առաջ: Ըսենք, ազատութիւն ունեցանք, պէտք է զայն պահել ջանանք: Վաղը, դժբախտ, շատ դժբախտ դէպքեր կրնան պատահիլ եւ նոյնիսկ ժէօն թուրքերէն ոմանք կը դառնան մեր դահիճները: Պէտք է հայ ժողովուրդը զինել այդ

օրուան համար...»(5):

Դժբախտաբար Ա. Ոստանիկի կանխատեսումը չ'ուշանար: 1909 Ապրիլին, Ատանայի Աղէտին յորձանքը կը հասնի Կեսարիա: Ա. Ոստանիկի գլխաւորութեամբ, կը կազմուի միջկուսակցական ինքնապաշտպանական մարմին մը, որուն կեդրոնատեղին կ'ըլլայ Պաղչէ Պաշտ թաղամասին մէջ գտնուող հնչակեան «Ժիրայր» ակումբը: Կը կազմուին պահակակիւղեր եւ շրջիկ խումբեր: Դէպի Կեսարիա շարժող թեան մարտիկները կը կենան դէմդիմաց:

Կեսարիոյ նահանգապետ ձեմալ փաշա, հանդէս կը բերէ, շրջահայեաց եւ մարդասիրական կեցուածք. ան ամէն գնով կ'աշխատի առաջը առնել արիւնահեղութեան: Մինչդեռ գինուորական հրամանատար գօր. Ֆէրիք փաշա, կը փորձէ գրգռել ամբողջ եւ հաշուեյարդարի ենթարկել կեսարահայութիւնը:

Բոլոր ուշադրութիւնները կը կեդրոնանան ինքնապաշտպանական ուժերուն ղեկավար, «կարճահասակ, երկար մազերով, քաջ եւ յանդուգն»(6) Ա. Ոստանիկին վրայ, որուն ինքնութեան անծանօթ թուրքեր, այդ շրջանին անոր կու տան Սաշը Ֆետայի կեղծանունը(7): ձեմալ փաշա, խուժանը հանդարտեցնելու մտօք կ'առաջարկէ որ Ա. Ոստանիկ հեռանայ Կեսարիայէն. մինչդեռ Ֆէրիք փաշա կ'ուզէ զայն ձերբակալել՝ ինքնապաշտպանութեան կորովը կոտորելու համար: Այդ օրերուն «Բիւզանդիոն»ի Կեսարիոյ թղթակիցը կը գրէ.- «Պր. Ոստանիկի մը հեռացումն եթէ թուրք խուժանին միտքը պիտի հանդարտեցնէ, մեր ամէն օր մատնանիշ ըրած բռնապետական մնացորդներուն Կեսարիայէն արտաքսումը ամբողջ քաղաքը պիտի խաղաղեցնէ»(8):

Այդ կացութեան մէջ, Ա. Ոստանիկ կը դիմէ համարձակ քայլի մը: Իր մօտ եղած ձեռնառումներով կը բարձրանայ ակումբին տանիքը եւ կը սպառնայ գանոնք օգտագործել՝ խուժանին յառաջ շարժելու առաջին իսկ պահուն: Թուրք խուժանը կը տատամի ու կը նահանջէ: Այդ միջոցին, Կեսարիա կը հասնի սուլթան Ապտիլ Համիտի գահընկեցութեան եւ Ազատարար Բանակին Կ. Պոլիս մտնելու լուրը՝ որն եւս ժխտական կ'ազդէ ամբողջին եւ Ֆէրիք փաշայի տրամադրութիւններուն վրայ:

Կեսարիա կը փրկուի ստոյգ կոտորածէ:

«Այդ դէպքէն վերջն էր, որ չէզոք հայերու խնդրանքով եւ Հնչակեան Մարմնի որոշումով՝ Ոստանիկ ինքնաբերաբար յանձնուե-

ցաւ ձէմալ պէյի, որու կարգադրութեամբ եւ զօրաւոր պաշտպանութեան տակ Ոստանիկ մեկնեցաւ Պոլիս, թողելով մեծ երախտագիտական անմոռաց յիշատակութիւններ»(9):

Ատանայի Աղէտին Կեսարիոյ փրկութեան գործին մէջ Ա. Ոստանիկի դերակատարութեան մասին շատ մը յուշագրողներ անդրադարձած են, բոլորն ալ բարձր գնահատելով անոր յանդուգնութիւնն ու նուիրումը ոգին: Բնականաբար, այդ վկայութիւններուն միջեւ կան նրբերանգներ: Միայն, հայ պահպանողական մտքի դասական ներկայացուցիչներէն Արշակ Ալպոյաճեանն է որ Ա. Ոստանիկի վարմունքը կը նկատէ «յիմար արարք»(10):

Կեսարիայէն հեռանալէն ետք, Ա. Ոստանիկ կը մեկնի Կ. Պոլիս ուր կը հետեւի բժշկական համալսարանի ատամնաբուժական ճիւղին, գոր կ'աւարտէ 1912ին:

Նոյն թուին, որպէս բժշկասպայ կը զօրակոչուի բանակ ու կը մասնակցի Պալքանեան Պատերազմին:

1913ին, կը վերադառնայ իր ծննդավայրը՝ Վան, ուր անձնական գործին կողքին կը մասնակցի ազգային-հասարակական կեանքին:

1913 Օգոստոս 26ին, Այգեստանի մէջ, թուրք ոստիկաններու դարանակալ գնդակին գոհ կ'երթայ Ա. Ոստանիկ: Իշխանութիւնները կը փորձեն ոճիրը վերագրել հայերու: Սա, ի թիւսհատական իշխանութիւններուն նենգամիտ քաղաքականութեան մաս կազմող ձեւ մըն էր, որ օգտագործուած էր նախապէս ալ: Մօտաւորապէս տարի մը առաջ, դարձեալ Վանի մէջ կը սպաննուի Վանի քաղաքապետ, ՀԲԸՄ-ի Վանի մասնաճիւղի նախագահ Պետրոս Գափամաճեան եւ քանի որ վերջինս տարակարծութիւններ ունէր ՀՅԴ-ի հետ, իշխանութիւնները կ'աշխատին այդ ոճիրը բարդել ՀՅԴ-ի ուսերուն(11): Նոյն տարին Սեբաստիոյ մէջ, դարձեալ դարանակալ գնդակներու գոհ կ'երթայ հնչակեան հինաւուրց եւ հռչակաւոր ֆետայապետ Մինաս Օղլու (Յովհաննէս Մինասեան). իշխանութիւնները կ'աշխատին այդ ոճիրը բարդել ՀՅԴ-ի ուսերուն(11): Նոյն տարին Սեբաստիոյ մէջ, դարձեալ դարանակալ գնդակներու գոհ կ'երթայ հնչակեան հինաւուրց եւ հռչակաւոր ֆետայապետ Մինաս Օղլու (Յովհաննէս Մինասեան). իշխանութիւնները կ'աշխատին այդ ոճիրը բարդել ՀՅԴ-ի ուսերուն(11): Նոյն տարին Սեբաստիոյ մէջ, դարձեալ դարանակալ գնդակներու գոհ կ'երթայ հնչակեան հինաւուրց եւ հռչակաւոր ֆետայապետ Մինաս Օղլու (Յովհաննէս Մինասեան). իշխանութիւնները կ'աշխատին այդ ոճիրը բարդել ՀՅԴ-ի ուսերուն(11): Նոյն տարին Սեբաստիոյ մէջ, դարձեալ դարանակալ գնդակներու գոհ կ'երթայ հնչակեան հինաւուրց եւ հռչակաւոր ֆետայապետ Մինաս Օղլու (Յովհաննէս Մինասեան). իշխանութիւնները կ'աշխատին այդ ոճիրը բարդել ՀՅԴ-ի ուսերուն(11):

Այս պարագային սակայն, իշխանութիւններուն բոլոր ճիգերը կը ձախողին՝ որովհետեւ կը հանդիպին հայութեան միաձուլ եւ միահամուռ հակազդեցութեան:

Այդ շրջանին Վան գտնուող երիտասարդ դատական քննիչ Մատթէոս էպիլիդաթեան կը գրէ.-

Մար.ը էջ 20

Bedros S. Maronian

818/500-9585

Siamanto B. Maronian

818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածէր է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԱՒԵԼԻ ՔԱՆ 57,000 ՏՈԼԱՐԻ ԳՈՒՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱՒ

Ընդառաջելով Սուրիահայու-թեան Օժանդակութեան Միացեալ Յանձնախումբին կողմէ վերջերս ուղղուած կոչին, Քալիֆորնիոյ Հայկական ամենօրեայ վարժարաններու աշակերտութիւնը լծուեցաւ գործի՝ օգնութեան հասնելու համար իր Սուրիահայ քոյր-եղբայրներուն: Հովանաւորութեամբ՝ վարժարաններու հոգաբարձութեանց ու վաճկելով տնօրէնութեանց եւ ուսուցչական կազմերու ամբողջական գործակցութիւնը՝ անոնք կազմակերպեցին բազմաթիւ միջոցառումներ, սկսեալ խմորեղէնի վաճառքէն մինչեւ պարանցիկ երեկոներ, ուրկէ գոյացած գումարները ամբողջութեամբ պիտի տրամադրուին Սուրիահայ վարժարաններու կրթական կարիքներուն: Առաջնորդուած «Փոքր նուէր մը իմ դպրոցէս քու դպրոցիդ» նշանաբանով՝ աւելի քան երկու ամիսներու վրայ երկարող այս աշխատանքները իրենց լրումին հասան Դեկտեմբեր ամսուն, գոյացնելով 57,613.03 տոլար:



«Ապրին մեր աշակերտները եւ մեր վարժարանները»:

- Ստորեւ կուտանք հանգանակուած գումարներու ցանկը.
- Շամլեան Ազգային Վարժարան \$ 21,128
- Ֆերահեան Ազգային Վարժարան \$10,000
- ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան \$7357.39
- Ա. Եւ Մ. Յովսէփեան Վարժարան \$5,000
- Ալեք Փիլիպոս Ազգային Վարժարան \$4,000
- Մեսրոպեան Ազգային Վարժարան \$3,300
- Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարան \$2,000
- Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարան \$1,500
- Գուրգեան-Չաքարեան-Վասպուրական Ազգային Վարժարան \$1,250
- Հայ Քոյրերու Վարժարան \$ 895
- Սահակ-Մեսրոպ Հայ Աւետարանական Վարժարան \$ 800
- ՀԲԸՄ վաչէ եւ Թամար Մանուկեան Վարժարան \$382.64:

Բացի իրենց բերած նիւթական նպաստէն, այս միջոցառումները ունեցան նաեւ կարեւոր բարոյական իմաստ՝ աշակերտութեան մէջ, զարգացնելով իրենց ազգակից երեխաներու օգնելու գիտակցութիւնը:

Յատկանշական եւ յուզիչ էր մանաւանդ, կարգ մը երեխաներու պատրաստակամութիւնը: Արդարեւ, անոնցմէ շատերն առաջարկեցին իրենց կէսօրուայ ճաշի գումարը յատկացնել այս նպատակին: «Այս երեւոյթը մեզի մեծապէս կը յուսադրէ ու կը մխիթարէ» յայտնեց Յանձնախումբի ատենապետ՝ Ժան Թիթիզեան ու աւելցուց

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ՝ ԶԱԻՆ ԽԱՆՃԵԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՍԸ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՄԱՍԻՆ

2015-ը կը նշէ Հայոց Ցեպասպանութեան Հարիւրամեակը եւ աշխարհացրիւ հայութիւնը պիտի ոգեկոչէ այս յատուկ թուականը զանազան յայտագիրներով եւ միջոցառումներով, վառ պահելու արդարութեան եւ ճշմարտութեան Չահր: Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան ափերու վրայ, Հայ Աւետարանական Համայնքի ծրագրած շարք մը գործունէութիւններու շարքին, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) Գործադիր Տնօրէն՝ Պրն. Զաւէն Խանճեան պիտի ներկայացնէ դասախօսութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Յունուար 30, 2015-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Բըրէ-մըսի (Նիւ Ճըրզի) Հայ Երիցական Եկեղեցիին մէջ: Դասախօսութեան նիւթը պիտի ըլլայ «Հրանդ Տինք՝ Մարդը, Առաքելութիւնը եւ Նահատակութիւնը»՝ հերոս մը, որ հանդիսացաւ զրկեալ եւ ճնշեալ զանգուածներու խօսնակը, եւ պայքարեցաւ արդարութեան եւ ճշմարտութեան համար: Դասախօսութեան նիւթը պիտի ցուցադրուի տեսաերիզ մը, SWALLOW'S NEST (Ծիծեռնակին Բոցը) խորագրով, որ կը ներկայացնէ Հրանդ Տինքի կեանքը Պոլսոյ Հայ Աւետարանական Համայնքի թուզլայի Արմեն եւ Արմենուհի ճամպարին մէջ:



Տինք եղբայրները՝ Հրանդ, Խոսրով եւ Օրհան, պատասխարուած եւ իրենց ուսումը ստացած են Կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական Եկեղեցիի Պոլսոյ Պատանեկան Տան մէջ, որուն Տնօրէնը եղած է Հրանդ Կիւզէլեան՝ Հայ Աւետարանական Հերոս մը, որու առաքելութիւնը եղած էր փնտռել եւ ձուլումէ փրկել Անատոլիայի մէջ ապրող Հայ ընտանիքներ՝ յատկապէս երիտասարդներ: Դասախօսութեան նիւթը պիտի հրամցուի թեթեւ հիւրասիրութիւն մը: Յաւելեալ տեղեկութեանց համար կրնաք հեռաձայնել ԱՀԱԸ-ի Կեդրոնատեղին 201.265.2607 - www.amaa.org:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ ԼԱՐՔՈՒՄ Բ ԿՐԹԱՇՐՁԱՆ

Լարք հաստատութիւնն իր առաքելութեան՝ հայկական մշակոյթը պահպանելու, ուսուցանելու եւ բաժնեկցելու համար, սկսում է ուսուցողական դասընթացներ ընդարձակել: Շարքը կազմուած է հետեւեալ նիւթերից.

- Հայոց պատմութիւն եւ աշխարհագրութիւն.
- Դասական հայերէն (գրաբար)
- Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւն:
- Կարող են մասնակցել 18-էն վեր տարիքի ուսանողներ:
- Հետաքրքրուողներ կարող են ընտրել որեւէ նիւթ ըստ նախասիրութեան: Հայոց պատմութեան դէպքում կարող էք արձանագրուել հայերէն կամ անգլերէն դասաւանդութեանը: Մասնակիցները կ'ունենան հնարաւորութիւն սովորելու հայոց պատմութեան եւ մշակոյթի մասին՝ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը:
- Դասընթացները մաս են կազմում 2014-2015թթ. «Լարք»ի այն լայնածաւալ միջոցառումների շարքին, որոնք յիշատակում են Մեծ Աղէտի՝ Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ տարելիցը:
- Դասաշրջանը սկսում է Շաբաթ, Յունուար 10, 2015ին, Լարք երաժշտական ընկերակցութեան համալիրում (543 Arden Ave., Glendale, CA) եւ պիտի շարունակուեն մինչեւ Մայիս ամէն Շաբաթ:
- Դասական Հայերէն, առաւօտեան 8 - 10
- Հայոց Պատմութիւն (անգլերէն), առաւօտեան 10 - 11
- Հայոց Պատմութիւն (հայերէն), առաւօտեան 11 - 12:
- Մի՛ կորցրէք այս եզակի առիթը՝ տեղեկանալու համար հայկական մշակութային ժառանգութեան մասին:
- Դասընթացներին արձանագրուելու համար, կամ եթէ ունէք հարցեր, կը ինքրուի կապուել «Լարք»ի հետ.
- Հեռ. (818) 500-9997
- Ե-նամակ: info@larkmusicalsociety.com
- Ֆէյսբուք: <http://www.facebook.com/LarkMusicalSociety>
- Հասցէ. Lark Musical Society
- 543 Arden Ave. Glendale, CA 91203



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ Զաղորդագրութիւն

Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, հովանաւորութեամբ Լոս Անճելոսի Միացեալ Հայկական Խորհուրդի, Ամերիկայի Խարբերդի Մշակութային Միութեան վարչութիւնը կազմակերպած է հրապարակային Յուշ Երեկոյ մը նուիրուած՝ Խարբերդի հայ նահատակ երեք մտաւորականներուն:

Ներկայացնողներ՝

- Փրոֆ. Օշին Քէշիշեան - Թլկատինցի (Յովհաննէս Յարութիւնեան)
- Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան - Յովհաննէս Պուճիքեանեան
- Գէորգ Պետիկեան - Ռուբէն Զարդարեան
- Հանդիսավար - Արա Ահարոնեան

Յայտագրին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Լոս Անճելոս Քաղաքի Խորհուրդի անդամ Խարբերդցիի գաւակ՝ տիար Փոլ Գրիգորեան:

Գեղարուեստական յայտագիր

Վայր - Կլենտէյլի Իրանահայ Միութեան հանդիսասրահին մէջ 117 S. Louise Street, Glendale CA 91205

Կիրակի, 25 Յունուար, 2015ին կէսօրէ ետք ժամը 6:00ին

Մուտքը ազատ, իսկ աւարտին հիւրասիրութիւն

Մեր ջերմ փափաքն է, որ մեր հայրենակիցներն ու շրջանիս մշակութասէր հասարակութիւնը իրենց ներկայութեամբ քաջալեր հանդիսանան հայրենիքի եւ Սփիւռքի տարածքի հայրենակիցներուն նեցուկ կանգնող միութեանս բոլոր ծրագիրներուն:

Յայտնենք նաեւ որ վարչութիւնս հրապարակ հանած է նաեւ Միութեանս օրացույցը, որ նուիրուած է Մեծ Եղեռնի հարիւրամեակին եւ որուն նկարները իր անձնական հաւաքածոյն տրամադրած է միութեանս ատենապետ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան:

Յարգանքներով՝

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՎԱՐՉՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՉԱՅՆԵԼ (626) 797-7680

«ՍԻՐՈՎ ԶԻՄՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ԳԼԽԱՐԿՆԵՐ ԵՒ ԾԱԾԿՈՑՆԵՐ ԿԸ ՀԱՅԹԱՅԹԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ



2013-ին Նիւ Ճըրջի Նահանգէն երկու տիկիններ, Պէթի Չէրքէզեան եւ Նէնսի Պըրտմըն գաղափարը յղացան Սիրով Հիւսուածե ծրագրի մը, անհրաժեշտ գլխարկներ եւ ծածկոցներ հայթայթելու Հայաստանի նորածին մանուկներուն: Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (ԱՀԱԸ) տեսնելով անհրաժեշտութիւնը այս ծառայութեան, որդեգրեց զայն որպէս մէկ մասը Հայրենիքին մատուցած իր տարբեր նպաստի ծրագիրներուն:

Ամէն տարի շուրջ 40,000 երեխաներ կը ծնին Հայաստանի մէջ, սակայն շատ քիչ ծննդատուներ գլխարկներ եւ ծածկոցներ կը հայթայթեն նորածիններուն, իսկ հեռաւոր քաղաքներու եւ գիւղերու

մէջ բնաւ չհայթայթուիր:

Անդրադառնալով այս մեծ կարիքին, «Սիրով Հիւսուած» ծրագիրը կը ձգտի որքան որ կարելի է, գլխարկներ եւ ծածկոցներ ապահովել բոլոր նորածիններուն՝ Հայաստանի ամբողջ տարածքին: Անցնող տարի այս ծրագիրը ներկայացուցաւ Միացեալ Նահանգներու տարբեր համայնքներուն, եւ մինչեւ օրս արդեն շատ մը տիկիններ մեծ սիրով կը մասնակցին անոր, հիւսելով գեղեցիկ գլխարկներ եւ ծածկոցներ:

Հիւսուած ծածկոցներուն չափը պէտք է ըլլայ նուազագոյն 30" x 30" (inch) իսկ գլխարկներուն չափը 9"-էն 14" (inch) տրամագիծով:

Շաբ.ք էջ 18

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԸ

ԳԵՈՐԳ ՔԷՕՄԿԵՐԵԱՆ

Օդին մէջ կը զգամ հեծեծանքը շուտով անցնելիք տարուան, անոր տրտմաթախիծ մեղեդին... Ընթացիկ տարին պիտի դառնայ հին, ժամանակ առեղծուածի օրէնքով անխախտ..., մինչ նոր էր ան դեռ քանի մը ամիս առաջ...: Նոյնը չէ՞ մարդ հակի պարագային եւս, երբ երիտասարդը կը թառամի տարիներու բեռան տակ, կը դառնայ «հին», եւ տեղ կու տայ նոր սերունդին... Հինն ու նորը այսպէս կը հերթափոխուին, ներկան կը դառնայ անցեալ, նոր սերունդը՝ հին սերունդ, անվրէպ շարունակականութեամբ: Աշխարհն ալ կը փոխուի յարաշարժ՝ նոր մարդոց մով, նոր միտքերով, նոր գաղափարներով, նոր արժէքներով... եւ այնքան սրընթաց, գլխապտոյտ պատճառող արագութեամբ, մնաստանդ արհեստագիտական հրաշք-գիտերու եւ հնարքներու ներկայ դարուն, որ կարծէք մէկ տարիէն միւսը՝ մարդը կ'ապրի ամբողջովին նոր դրուածքի մը մէջ... Բացք երանի՝ թէ նորը ըլլար աւելի պայծառ, աւելի վե՛հ ու վսեմ, աւելի բարի ու արդար... ԵՐԱՆԻ՝

Տօնական խորհուրդը... տարեվերջի այս օրերուն եւ Նոր Տարուան սեմին... խորհուրդ՝ որ ո՛չ շուկայացած «արժէք»ներուն մէջ կը գտնենք, ո՛չ ճոխ սեղաններուն, ո՛չ ալ գեղեցիկ գարդարանքներուն մէջ... Աւա՛ղ, կարելի չէ գայն գնել դրամով, գտնել գայն նիւթական հարստութեան մէջ, ապրանքայնացած «բարիք»ներուն մէջ..., որոնք տեւ կրնան ճշմարիտ ուրախութիւն տալ սրտին, որքան ալ դիւթեն ու հմայեն մեզ: Տօնական խորհուրդը

ամբողջովին տարբեր տարածքի վրայ կը թուի ըլլալ... Մարդկային սիրոյ, համերաշխութեան, իրարահասկացողութեան մէջ թերեւս... Գեղեցիկը, վսեմն ու ազնիւը տեսնելու, զգալու եւ արարելու մէջ... Եւ ուրիշը ուրախացնելու մէջ... Տօնական խորհուրդը հոգեւոր-բարոյական տարածքի վրայ է գերազանցօրէն եւ որքան կը նսեմանայ ու կը մանրանայ ան, երբ վերածուի նիւթի, նիւթականի, շուկայիկի...

Ամբողջ կեանք մը որոնումներու մէջ ենք՝ գիտակից թէ անգիտակից...: Կ'որոնենք այն լոյս-փարփար որ ուղեցոյց դառնայ մեզի՝ կեանքի բարդ ոլորաններուն... Կ'որոնենք կեանքի այն բուն իմաստը, գոր այդպէս ալ չկրցանք գտնել... Կ'որոնենք ա՛յն սրտակից, հոգեկից, խոհակից ընկերը, որ իտէլալու երազ մնաց միայն... Կ'որոնենք դեռ մենք զմեզ, մեր բուն, խորքային ԵՍ-ը, որուն ներքին ձայնը քիչ անգամ հասած մեզի... Բայց այդ որոնումներն են որոնք կը լեցնեն մեր ներաշխարհը, մեզ պահելով իրենց յուզա-իմացական շարունակական շարժումին մէջ...

Նոր տարուան նո՞ր լուսաբացը, նո՞ր երկինքն ու արեւն է գոր պիտի դիմաւորենք... Թէ՛ մեր հայեացքն է նորոգ, կեանքի շարունակական ընթացքին վրայ, ուր Նոր Տարիները հանգրուաններ են թերեւս՝ պահ մը կանգ առնելու, վերագնահատելու կեանքն ու աշխարհը... մեր կեանքը ի մասնաւորի, մեր իղձերն ու երազները, լեցուելու նոր վճռակամութեամբ գանոնք ի կատար ածելու համար... Հանգրուան՝ երբ միասին կ'ուրախանանք, միասին կը յուսադրուինք, միասին կը նայինք դէպի

Շաբ.բ էջ 16

HMM ATHLETIC ASSOCIATION

SOCCER




Boys Ages 9–17 Welcome

Call us today to join!

Vartan Kojababian (818) 384-2987
Anto Shahinian (626) 354-7778

«ՕՐՕՐ»-Ը, ՈՐ ՉՍԱՅԱՑԱՒ...

ԴՈԿՏ. ՀՐԱԹՐ ԶԷՊԷՃԵԱՆ

Հայկալի հոգետունը ինձի համար սոսկ անուն էր, բայց երբեք այդպես չէր ծնողքիս եւ հորեղբորս՝ սուբթ. Ռոպէր ճէպէճեանին եւ մանաւանդ՝ մեծ ծնողներուս համար:

Բոլորն ալ հայկապահայեր, որոնք ամուր կերպով կառչած էին իրենց արմատներուն, ինչպէս նաեւ մեծցած ու դրոշմուած էին իրենց ծննդավայրին նկարագիրով: Անոնք շատ չէին խօսեր հոգետան մասին, սակայն անոնց ներաշխարհին մէջ կային խոր եւ բազում զգացումներ՝ այդ կառուցին կապուած: Անոնք տեսած էին ու ապրած կեանքի դառն փորձառութիւնները, հոգետան մէջ ու անոր ընդմէջէն: Կրնայի զգալ ցաւը, վիշտն ու արցունքը: Հոգետունը զբօսավայր չէր, այլ Յեղասպանութենէն ճողորմարած հայուն համար հանդիսացած էր «վերջին կայան», ուր քիւրաբար հայ գաղթականներ ստված, հիւժած ու հիւանդ վիճակի մէջ էին. անոնք կ'ապրէին եւ կը պատրաստուէին իրենց հոգին աւանդել անոր ցուրտ փողոցներուն մէջ...:

Հօրեղբորս Հայկալի տան գեղանկարչական գործերու հաւաքածոներուն մէջ կար նաեւ հոգետան մէկ նկարը: Տարիներ շարունակ Հայկալ կատարած յաճախակի այցելութիւններուն ընթացքին ինձի համար հոգետունը այդ նկարն էր



աղա Գատեմեանին: Կարապետ աղա ամէն երեկոյ տուն վերադարձին կ'անցնէր հոգետան ետեւի կողմէն՝ խրամին աջ կողմը երկարող նեղ փողոցով: Ան ամէն երեկոյ կը տեսնէր հայրը ինք, որոնք հիւանդ, դժբախտ եւ յաճախ մահամերձ վիճակի մէջ համարեալ նուազած կ'ըլլային մայթերուն վրայ...:

Սակայն այդ գիշերը Կարապետ աղային համար տարբեր եղաւ. արդարեւ, երբ ան դարձեալ կ'անցնէր նոյն փողոցներէն, գետին պատկած տժգոյն եւ սկար մարդ մը խօսքը իրեն ուղղելով՝ դողդոջուն ձայնով եւ հեւալով ըսաւ. «Դուն հա՞յ ես...»:

Կարապետ Պապլոզեան կանգ առաւ: Երեւի պահ մը մտածեց, թէ «Բարի սամարացի»-ի պատմութիւնը իրական դարձաւ նաեւ իրեն համար, նաեւ մտածեց, թէ «Բարի սամարացի»-ի պատմութեան մէջ ի՞նչ կերպարը պէտք էր ըլլար ինք այդ պահուն: Ղեւտացի՞ն, քահանայ՞ն, թէ՞ սամարացիին: Կարապետին ընտրանքը եղաւ սամարացիին կերպարի մարմնաւորումը: Ան մօտեցաւ սկար մարդուն եւ օգնեց անոր, որ ոտքի ելլէ: Բայց այդպիսով չբաւարարուեցաւ: Կարապետ գայն տարաւ իր տունը, տաք ճաշ հրամցուց եւ բաղնիքը ջերմացնելով մարդուն լոգանքի առիթ տուաւ: Անոր ցնցոտիները հանեց եւ նոր զգեստներ հագցուց: Այս բոլորը կատարուեցան լուսթեան մէջ, առանց տակաւին ծանօթութեան կամ խօսակցութեան: Տկար ու յոգնած մարդը միայն կը հետեւէր Կարապետին ցուցմունքներուն: Եթէ ան այլընտրանք չունէր, ապա ինչպէ՞ս կրնար այդ բոլոր հոգատարութիւններուն «ոչ» ըսել...:

Երեւի պէտք էր հանգստանար, որպէսզի ինք «սպառած օտարական»-ը քաջալերուէր ու սկսէր խօսիլ Կարապետին հետ: Իսկ խօսակցութիւնը... Ո՛չ իր մասին էր, եւ ո՛չ ալ իր կրած տառապանքին ու դժբախտութիւններուն: «Օտարական»-ը հայ էր, ինչպէս բոլորը, եւ ինքն ալ նոյն ճակատագիրին ենթարկուած էր: Կարիքը չզգաց խօսելու համայն հայութեան կրած տառապանքին մասին, ան նախընտրեց «վերապրելու» մասին խօսիլ:

«Կրնայի՞ք ինձի ջութակ մը ճարել», եղաւ իր առաջին հարցումը՝ Կարապետ աղային ուղղուած:

Կարապետ շուարած էր, հաւանաբար սկսաւ կասկածիլ, թէ այս հիւանդ ու հիւժած «օտարականը» նաեւ հոգեկան ու մտային խախտումներ սկսած էր ունենալ: Բայց Կարապետ ի մտի պէտք էր ունենար բանաստեղծին ճշմարիտ խօսքը.

ԱՄԱՆՈՐԻՑ-ԱՄԱՆՈՐ ԶԱՐԻՐԱՄԵԱԿ Ռ. ԿՈՐԻԻՆ

Տարեմուտի առաջին օր Բարձրակոչում է դատը մեր, Ցեղասպանութեան հարիւրամակը

Մի ամբողջ ազգի, ժողովրդի կոտորածը: Թշնամին վայրագ, Ազահ ու արիւնոռչտ, Ծրագրեց ու կազմակերպեց Խաղաղ ժողովրդի եղեռնը, Որ մոռացնել տայի սպառ Վաղ օրերից առկայ Հայդատը, Հայի սեփական հայրենիքը, Արդարգոյատեման պահանջը: Տարեմուտի առաջին օր, Միակամ ու միարան, Ընդառաջ ենք գնում նպատակասլաց

Մեր դատի պահանջատիրութեամբ: Աշխարհով մէկ լայնատարած Կոչ ենք անում մարդկութեան՝ Որ քիթիական մի ժողովուրդ Դարեբով իր հայրենիքում Ապրում էր ստեղծագործ կեանքով Վեհ մշակոյթով ծերունագարդ, Հաւատով առաջին, Գեղազարդ տանարներ ու վանքեր Աստուծապաշտութեան փրօսելու 1915 ին Ջարդ, ցեղասպանութեան արեւախրթ,

Մէկ ու կէս միլիոնից աւելի անմեղ ժողովուրդ, Որ քրիական եսքաղանի գոհն է դարձել, Պապեմական հայրենիքը բռնագրաւուել: Դառն նակատագրի հարկադրանքով Ջարդի խղեկները աշխարհով մէկ ցուրուել, Յոյժ նեղութիւններով գոյատեւել Տառապանքներից կոփուել Պայքարի է դուրս եկել: Յանուր մարդկութեան ենք դիմում, Իրենց խղի ճայնին ենք դիմում, Հայոց ցեղասպանութիւնը դատապարտեն, Արդարութիւնը վերականգնեն, Պատմական ու ժողովրդատիր դատավիճակ անեն, Որ ոչ մի տեղում Եւ ոչ մի երկրում, Խաղաղ ու ստեղծագործ ժողովուրդ Հայրենագուրկ չլինի, Կոտորածի ու ջարդի չենք արկուի, Խաղաղ կեանքը քեւածի ժողովուրդների սերտ կեանքով երջանիկ:



ու քիչ մըն ալ աւելին...: Կրնայի տեսնել ու թափանցել հայուն «սեւ» ներաշխարհը այդ նոյն հոգետան փողոցներուն մէջ: Եւ այդ «սեւին» ակնատես եղած էին մեծ ծնողքս եւ հօրեղբայրս, որոնք տեսած էին, թէ ինչպէ՞ս հոգետան փողոցներէն հայերու դիակները սայլի մէջ կը լեցնէին ու «կը թաղէին» հասարակաց փոսի մէջ:

Եւ հօրեղբայրս հոգետան նկարը դրած էր մէկ կողմէ հայուն «վիշտին» արտայայտութեան համար, բայց անպայմանօրէն մտածելով անոր «վերապրումին» տեսլականին մասին:

Եւ այս վերապրումը ունի իւրապատուկ պատմութիւնը մը: Կարապետ աղա Պապլոզեան՝ Զէյթունի գաւազ, 1918-ին կ'ապրէր Հայկալի մէջ: Անոր բնակարանը կը գտնուէր Համիտիէի շրջանին մէջ, եւ դրացի էր Յովհաննէս

«Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկուբան, նախ կեանքը՝ վերջը լացող մ'իր վրան...»:

Կարապետ աղա փութաց իր դրացիին՝ Յովհաննէս Գատեմեանին մօտ, բերաւ անոր ջութակը ու յանձնեց «օտարական»-ին: «Օտարական»-ին ձեռքին մէջ ջութակը շատ վարժ գործիք մը թուաց: Ան շատ արագ կերպով կրցաւ լարերը շտկել եւ սկսաւ նուազել հայկական մեղեդիներ, որոնք իրարու յաջորդեցին:

Կարապետ եւ Յովհաննէս երկուքն ալ զարմացած, հարց տուին «օտարական»-ին:

- Ի՞նչ է անունդ, բարեկամ:
- Բարսեղ,- եղաւ անոր պատասխանը:
- Մականո՞ւնդ:
- Կանաչեան,- շարունակեց ան: -Ես Կոմիտաս վարդապետին հինգ աշակերտներէն մէկն եմ...:

Կարապետ եւ Յովհաննէս «օտարական»-ը տարին Ազգային առաջնորդարան: Եւ այդ օրերուն, երբ հայ ժողովուրդը կ'ապրէր իր ամէնէն դժգոյն, դժուար ու ողբերգական օրերը, առաջնորդարանը կրցաւ կազմակերպել յատուկ համերգ մը Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մանկապարտէզի սրահին մէջ: Համերգները կրկնուեցան...: Ներկաները, որոնք յուզուած էին, արցունքները իրենց աչքերուն, մէկ կողմէ կ'ապրէին հայուն կարօտը, իսկ միւս կողմէ՝ վերապրելու զգացումը...: Եւ այդ վերապրումի կենդանի օրինակը՝ Բարսեղ Կանաչեանի «Համացած» տաղանդն էր:

Համերգներուն հասցիները յատկացուեցաւ տաղանդաւոր երաժիշտին, որ Համաշխարհային Ա. պատերազմէն ետք մեկնեցաւ Փարիզ՝ իր երաժշտական ուսումը կատար

ընթացողը եւ նպատակով:

Բարսեղ Կանաչեանի տաղանդն ու երաժշտական կեանքին մէջ արձանագրած նուաճումները դարձան ակներեւ: Հայկական ու միջազգային երաժշտական արուեստին մէջ սիրական անուն մը դառնալու կողքին, անոր «Օրօր»-ը դիւթեց եւ տակաւին յուզող արուեստի գործ մըն է, որ ցայսօր կ'ունենի իր մեծ անձկութեամբ:

«Քուն եղի՛ր բալաս...աչերդ խուփ արա...»:

«Օրօր»-ը, որ մահուան ճիւղաններէն դուրս գալով՝ եղաւ ապրող իրականութիւն:

Բարսեղ Կանաչեան «Օրօր»-ին ընդմէջէն կրցաւ տեսնել հայ մանուկին քնանալը, անոր քնանալուն ընդմէջէն՝ «առողջ» մեծնալու հոյակապ ջրհոր, իսկ հայ մանուկին հասակ նետելուն ընդմէջէն Կանաչեան տեսաւ հայուն յաղթանակը՝ մահուան դէմ: «Հոգետուն»-ը՝ «...մահուան շուքի ձոր»-ը, դարձաւ ապրելու մարտահրաւիր:

1955-ին՝ այդ դէպքէն երեսուներեք տարիներ ետք, Բարսեղ Կանաչեան Հայկալի մէջ դարձեալ կը հանդիպի իր «Բարի սամարացի»-ին՝ Կարապետ աղա Պապլոզեանին. անոնք կ'ողջագուրուին: Պահը յուզիչ է, սակայն կը հաստատէ, որ հայը չմեռաւ, իսկ հոգետունը դարձաւ հայուն վերապրելու կռուանը եւ յատկապէս հայը հայուն հետ ու իրարմով վերապրելու առիթ ստեղծող կեդրոնը:

Հայկալի հօրեղբորս տան «հոգետան» պատկերը...: Պատկեր մը, որուն ընդմէջէն հայը յաղթեց «մահուան», ուր «Օրօր»-ը չմահացաւ...:

«Օրօր»-ը, որ չմահացաւ...: Իսկ հայը շարունակեց ստեղծագործել ու ապրիլ:

"AN ARMENIAN SKETCHBOOK" «ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՐՈՒԱԳԻԾ»

ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ-ԳԱԼԱՅՃԵԱՆ

Ութրանացի գրող Վասիլի Կրոսմանի «An Armenian Sketchbook» «Հայկական Ուրուագիծ» հատորը հրատարակուած է Լոնտոնի մէջ 2013ին Րօպըրթ եւ Էլիզաբէթ Չէնտլըրներու Ռուսերէնէ Անգլերէնի թարգմանութեամբ: Վասիլի Կրոսման Ութրանացի Հրեայ մըն է, որ Բ. համաշխարհային պատերազմի ատեն Սովետական «Կարմիր Աստղ» թերթի թղթակիցն էր 1941-1945 թուականներուն:



Հրաչեայ Քոչարի հիւրամեծարութեան եւ ստեղծած պայմաններուն իր աշխատանքը կատարելով Ծաղկաձորի գրողներու տան մէջ: Այդ հոգածու վերաբերմունքին մաս կը կազմէր այն առիթը որ կը տրուէր Կրոսմանին շրջելու Հայաստանի գանազան շրջանները եւ ծանօթանալու հայ պարզ մարդուն հետ, գիւղացիին ու բանուորին հետ անոնց հետ երկար գրոցներ ունենալով: Կրոսմանի վկայութեամբն կը նախընտրէր այդ մարդիկը մտաւորականներէն, պետական բարձրաստիճան դեմքերէն եւ կամ կղերականներէն:

Կրոսման այդ երկու ամսուան ընթացքին Հայաստանէն իր ապրումներն ու տպաւորութիւնները կ'արտայայտէ գիրքի մը մէջ որ կը կոչէ «Բարեւ Ձեզ» հայերէնով: 1962ի առաջին կիսուն ան կը յանձնէ գործը «Navy Mir» հանդէսին որու խմբագիրը կը համաձայնի տպել գայն: Այս պարագային եւս գրաքննութիւնը կը կատարէ իր տիտղոսը որը այս անգամ վերցնելով հատուածներ գրքէն որուն կը հակառակի հեղինակը եւ ետ կը քաշէ իր ձեռագիրը: 1965ին իր մահուընէն ետք հատորը կը հրատարակուի, սակայն ընդարձակ յապաւումներով եւ միայն 1988ին է, որ Կրոսմանի աղջկան խմբագրութեամբ ամբողջական թէքստը կը տպագրուի «Znamya» թերթին մէջ եւ անկէ ետք կ'արժանանայ քանի մը հրատարակութիւններու: Անգլերէնի թարգմանիչներ Չէնտլըր ամուլը 2013ին փոխելով գրքի խորագիրը փոխանակ «Բարեւ Ձեզ»-ի կը կոչեն գայն «An Armenian Sketchbook» «Հայկական Ուրուագիծ»:

Այս հատորը շատ անձնական դրոշմ ունի եւ անմիջականութիւն: Կրոսմանի յուշերու պատումները շատ սակաւթիւ են եւ ոչ մէկ գործ հեղինակէն կը ծանօթացնէ այն մարդը, որ Կրոսման էր իր էութեամբ: Այս գիրքը իր անձնական վկայարանն է որ կը բովանդակէ իր տեսակէտները այլազան հարցերու մասին ինչպէս ազգայնամոլութիւն, ազատութիւն, արուեստի ըմբռնումներ, կեանքի հայեցակէտ: Ան կ'արտայայտուի այն արժէքներուն մասին որոնք իր սրտին ամէնամօտիկ տարրերը կը կազմեն: Կարծէք հեղինակը կը զգար որ երկար կեանք չունէր քաղցկեղի պատճառաւ որ գինք կը հիւծէր: Կրոսման գիրքը կ'աւարտուէ 1962ին ու կը մահանայ 1964ին:

Վասիլի Կրոսման այս գիրքին մէջ կը փորձէ արդարացնել իր

կեանքն ու քաղաքական համոզմունքները: Օսմանեան կայսրութեան օրով եղած սպանդներն ու 1915ի ցեղասպանութիւնը ու անոնց անպատիժ մնալը կը նկատէ պատճառը Հիտլերի իրազորածած ցեղասպանութեան եւ Ստալինի կատարած սպանդին: Փոքրամասնութեան մը դէմ կիրարկուող հալածանքը Կրոսմանի նման արդարամիտ եւ լայնախոհ գրողի մը համար կը նկատուէր նոզովք որուն դէմ կ'ըմբոստանար իր հոգին եւ գրիչը: Ան կը պատմէ իր գրքին մէջ թէ ինչպէս 75 տարեկան ծերունի մը կորսնցուցած էր գիտակցութիւնը երբ իր ընտանիքի անդամները իր իսկ ներկայութեան սպանուած էին թուրքերու կողմէ: Ան կը հանդիպի նաեւ հայերու որոնք Խրուշչեւեան ձիւնհալի այդ շրջանին կը նուաստացնէին Ստալինը իրենց որակումներով եւ վար առած էին անոր արձանը Երեւանի կեդրոնական շրջանին մէջ: Ան կը պատմէ հայ ծերունիի մը մասին որուն հայրը Սիպերիա մեղած էր եւ ոչ ոք գիտէր անոր ուր թաղուած ըլլալը: Հիւանդկախ ուրիշ ծերունի մը 19 տարի Սիպերիա աքսորուելէ ետք վերադարձած էր իր գիւղը ֆրիգիքայէս քայքայուած վիճակի մէջ, անկարող իր կեանքը շարունակելու:

Կրոսման հիացումով կը նկարագրէ հին եկեղեցիներն ու վանքերը, բնանկարները, լեռներն ու ձորերը, յաւերժական ժայռերը: Գեղջկական ճաշատեսակները գինք մեծապէս կը հրապուրեն: Յատուկ կերպով կը նկարագրէ «Լաւաշ» հացի պատրաստութիւնը հայ գիւղացի կիներու կողմէ: Ան հաճոյքով կը համտեսէ գայն պանիրով փաթաթուած ու թարմ հացի անուշ բուրմունքով թաթաւուն: Արեւահամ պտուղներէն նուազ, խնձորը, մանաւանդ ծիրանն ու խաղողը գինք այնչափ կը հրապուրեն:

Կրոսման կ'ուզէ ճանչնալ հայու տիպարը որ կը նկատէ չափազանց իւրաքանչեւ: Ուրախութեամբ կը հաստատէ որ յատկապէս գիւղացիները ունին այնպիսի արժանիքներ ինչպիսիք են սէրը ուրիշներու նկատմամբ, չարը դատապարտելու եւ բարին ջատագովելու կեցուածքը, հաւատքի առկայութիւնը կեանքի բոլոր երեւոյթներուն մէջ: Կրոսման կ'անդրադառնայ որ ինք հասարակաց արժէքներ ունի այս ժողովուրդին հետ, այնպիսի արժէքներ որոնք իր վէպերու խորքը կը կազմեն, ազնուութիւն, մարդկայնութիւն եւ համապարփակ սէր:

Յատկանշական են հետեւեալ

ՏԱՐԵՎԵՐՁԻ ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Մարուակուած էջ 14-էն
մեր ապագան, ազգի եւ հայոց երկրի ապագան դարձնելով մեր հայեացքի սեւեռակէտը: Անգամ մը եւս, նոր տարուան հետ, կ'որոշենք չկրկնել մեր անցեալի սխալները, կ'որոշենք վերանորոգել մեր ուժերը, աւելի մեծ ճիգեր ի գործ դնել, աւելի նպատակասլաց ընթանալ դէպի այն վաղուց երազուած, սպասուած ազգային վերածնունդը, որուն վարդահեղեղ արշալոյսին տոնաձայները կը բաղձանք, կ'աղօթենք լսել....


Ճշմարիտ տուն հոգեկան խրախճանք պիտի ըլլար, եթէ ա'լ դադար առնէին աշխարհաքանդ պատերազմներն ու տեսակ-տեսակ բռնութիւնները, մարդը մարդուն

տողերը. «Խօսած եմ հարիւրաւոր հայերու հետ, բոլորը իրենց հետաքրքրութիւններով, սէրերով, վիշտերով եւ յոյսերով, իրենց ճակատագրով, իրենց բարեկամներով եւ թշնամիներով... Ինչպէս հազարաւոր գետերն ու ջրանցքները որոնք կը թափին անտառներու, ժայռերու ընդմէջէն եւ ինչպէս նոյն այդ ջուրի հոսանքները կը բոխին ընդերկրեայ աղբիւրներէ եւ կը պարունակեն միեւնոյն մետաղները, այնպէս ալ բոլոր այս մարդկային տիպարներն ու անոնց ճակատագիրները միացած են իրարու Հայոց պատմութեան հազարաւոր տարիներով, այն ողբերգութեամբ որ Հայոց բաժինը դարձաւ Թուրքիոյ մէջ, այն հայրենաբաղձութեամբ որ ամէն հայ կը զգայ կորսուած Կարսի եւ Վանի նկատմամբ:»

Գիրքը վերջ կը գտնէ գիւղական հարսանիքի մը նկարագրութեամբ որը Կրոսմանի համար հայ ժողովուրդի բարիքներուն ծանօթանալու սքանչելի առիթ մըն էր: Հարսի, փեսայի եւ անոնց ընտանիքներու կնքահօր եւ ծնողներու մանրակրկիտ դերակատարութիւնը հեղինակը կը նկարագրէ մեծ հետաքրքրութեամբ եւ աւելնով, ընթերցողներուն փոխանցելով իր խոր տպաւորութիւնը եւ հիացումը դարերու ընթացքին գոյատեւած հայ ժողովուրդին եւ անոր աւանդութիւններուն նկատմամբ: Յուզումով կ'առանձնացնէ գիւղացիներէն մէկը որ կենաց կ'առաջարկէ այն Հրեաներուն համար որոնք Նացի Գերմանացիներու կողմէ բնաջնջուեցան Բ. համաշխարհային պատերազմի ընթացքին: Այդ պահուն Կրոսման կը համակուի այնպիսի զգացումներով որոնք գինք կը դարձնեն մէկ մասնիկը այդ ժողովուրդին:

Թէեւ ինք օտարական մըն էր Մոսկուայէն, հեռու իր բնաշխարհէն, սակայն ան գարմանալիօրէն կ'ապրէր նոյն ժողովուրդին պատկանած ըլլալու երջանկութիւնը: Այս բոլոր զգացումները արտայայտած տո- դերուն ետին կը նկատուի Կրոսմանի ճառագայթող ոճը եւ հոգեկան խայտանք որոնք կարծես հիւանդ գրողին վերջին ճիչերն էին իր մօտալուտ մահուընէն քիչ ժամանակ առաջ:

«An Armenian Sketchbook» գիրքի ընթերցողը դէմ յանդիման կը գտնուի մեր ժամանակաշրջանի մեծ գրագէտներէն մէկուն հետ, հաստատելով այն իրողութիւնը որ այն համամարդկային արժէքները որ Կրոսման կը բաժնէ հայ ժողովուրդի գաւակներուն հետ, հիմքը կը կազմեն իր մեծութեան:



իշխանութիւններու միջեւ նմանութեան եզրերը որպէս ամբողջատիրական տէրութիւններ:

Միայն 1988ին է որ «Կեանք եւ ճակատագիր» վէպը կը հրատարակուի Սովետ Միութեան մէջ որը գինք կը դարձնէ 20րդ դարու մեծ գրագէտներէն մին:

Կրոսման 1962ին երկու ամսուան համար կու գայ Հայաստան, թարգմանելու համար Հրաչեայ Քոչարի «Մեծ Տան Ձաւակները» Ռուսերէնի, հիմնուելով բառացի թարգմանութեան վրայ: Հակառակ որ այդ գործը Ռուսերէն թարգմանութեամբ երկու անգամ հրատարակուած էր, ըստ Քոչարի աղջկան Մարի Քոչարի յուշերուն, իր հօր փափաքով էր որ գիրքը յանձնուած էր մեծ համբաւ վայելող գրագէտ Վասիլի Կրոսմանին: Շատ հաւանաբար Սովետական իշխանութիւնները այս գործը յանձնած էին Կրոսմանին մեղմելու համար հեղինակին ցաւը իր «Կեանք եւ ճակատագիր» վէպին գրաւուծին համար: Հարկաւոր համարուած էր որ Կրոսման Հայաստան գար եւ ամբողջացնէր այդ վէպի թարգմանութիւնը: Ան կ'արժանանայ

ԱՄԱՆՈՐԸ ՅԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Նոր տարուայ առթիւ հայ ժողովրդին պարբերաբար շնորհաւորանքներ է յղել Դերեհիկ Դեմիրճեանը: Այս անգամ տպագրուած են ք հատուածներ ուղիղ 70 տարի առաջ՝ 1945-ի շեմին մեծ գրողի գրած «Անցաւ մի տարի եւս» յօդուածից, որը տպագրուել է «Գրական թերթի» 1944 թուականի Դեկտեմբերի 31-ի համարում:

«Անցաւ մի տարի եւս, ընթերցող»:

Այս տարի եւս մեր երկրագունդը մեր թերթի խմբագրութեան, աշխատակիցների եւ ընթերցողների հետ, ուղեկցութեամբ մեր բարեկամների՝ պտտուեց արեւի շուրջը:

Յուզաբերելով տիեզերքում յաղթանակի հրաշքներ՝ պտտուեց արեւի շուրջը նաեւ մեր պանծալի կարմիր բանակը, նրա հետ նաեւ թիկունքի միլիոնաւոր հերոսները, երկրի շինարարները, մեր երկրի հերոսական արդիւնաբերութիւնը, տեխնիկան եւ այլն, եւ այլն:

Մեր երկրագունդը սկսելով մի կէտից՝ վերադարձաւ նոյն կէտը: Նա չկրկնեց ոչինչ: Ինչպէս ամէն ինչ տիեզերքում, այնպէս էլ երկրագնդի վրայ այլեւս ոչինչ չէր կարող կրկնուել: Ամէն ինչ տեղափոխուեց է, փոխուեց է:

Եւ լաւ է, որ մեր երկրագունդը սկսելով մի կէտից՝ այլեւս չվերադարձաւ նոյն կէտը: Այդպէս էլ մենք ու ամէն բան աշխարհիս երեսին: Հիմա գանք 1944 թուին, որը բախտաւոր տարի եղաւ:

Մեր կարմիր բանակը մեծ յաջողութիւններ ունեցաւ այս 1944 թուին: Նա վերջնականապէս ազատեց մեր սրբազան հողը հիտլերեան գաւթիչներից:

Է՛, Հիտլերի էլ գործերը «վատ» չգնացին, նրանք մօտենում են իրենց վախճանին, շուտով կարմիր բանակը մեր դաշնակիցների հետ կ'ազատի նրան աշխարհ տիրելու ցնորամիտ ձեռնարկութիւնից եւ կ'առաջարկի իրագործել մի գործ... կախուել:

Աւանդական սովորոյթ է բարեմաղթութիւններ անել Նոր տարուայ առթիւ:

Սկսենք այն տեղից, ուր հարկ է նախ եւ առաջ եւ բոլորի էլ ցանկութիւնն է:

Այսպէս ուրեմն՝ ցանկանում ենք. Ամէնից առաջ Հիտլերին՝ հոտաւէտ «Տէժէ» սապոն, կախադանի պարանր սապնելու համար:

Գեբելսին՝ «Դամակի մատուցեր», շնորհալի կերպով ճակատին դնելու: Գերմանական բոլոր գաւթիչների՝ մահ:

Մեր պանծալի կարմիր բանակին՝ յաղթութիւն եւ ուրախ վերադարձ՝ հայրենիք:

Թիկունքային հերոսներին՝ նոր ունկորդներ:

Մեր արձակագիրներին՝ նոր մարդիկ:

Մեր քննադատներին՝ նորանոր տեսանկիւններ:

Մեր բանաստեղծներին՝ նորանոր հանգեր եւ աշուղական ձեւերից հեռու երջանիկ վայրեր:

Մեր Գրողների միութեան վարչութեան՝ քիչ ինդրատուներ բարեգործական գծով, շատ դիմողներ ստեղծագործական առաջադրանքներով:

Յուսանք, որ առաջիկայ 1945 թիւը կը բերի այնքան ուրախութիւններ, որ հերիք կ'անի մեզ եւ մեր բարեկամներին երկրագնդի վրայ:

Շնորհաւոր Նոր տարի:

Ստորեւ ներկայացնում ենք նաեւ

հայերեք բանաստեղծների հեղինակած բանաստեղծութիւնները: Որքան էլ տարբեր՝ դրանք արտայայտում են հայ մարդու յոյսը, հաւատը, սպասումները՝ վաղուայ պայծառ օրուայ հանդէպ: Քնարական այդ տողերը լի են լաւատեսութեամբ, ջերմութեամբ, գեղեցիկ ակնկալութիւններով:

Ընթերցենք եւ մաղթենք մեր բոլոր ընթերցողներին, որ 2015-ը լինի բոլորի իդէերի, նպատակների իրականացման, աննախընթաց յաջողութիւնների, նորանոր ձեռքբերումների, նուաճումների ու յաղթանակների տարի:

Շնորհաւոր Նոր տարի:
Երնեկ, թէ այս Նոր տարին, վերջ տար հայի ցաւերուն, Չարը կորչեւ, ու բարին Բունը դնէր մեր սրտերուն: Երնեկ, թէ այս Նոր տարին Ազատ շրջէր Հայաստան, Եւ շուրջ Մասիս մեր սարին Փայլէին արտանդաստան:

Երնեկ, թէ այս Նոր տարին Ոտքի կանգնէր Հայաստան, Եւ կիսաբանդ մեր կարին, Լինէր քաղաք մեր ոստան, Երնեկ, թէ այս Նոր տարին Հայի սրտի մէջ ուժ հոսէր, Ապաւինած իւր սրին... Հայը բընաւ չի սառնէր: Երնեկ, թէ այս Նոր տարին Հայի ազգ ի մի գումարուէր, Ի գլուխ կարնոյ հայ կամարին, Հայ դրօշակ ծածանէր Հայե՛ր, երբեք չերկմըտենք, Կը կատարուի այդ ամէն, Եթէ ի սպառ մենք հանենք Փոքրոգութիւն մեր սրտէն:

Ահա հասաւ Նոր տարի,
Հետը բերեց նոր բարի,
Մանր տղոց՝ ուրախ օր,
Բարի գաւակ՝ հօրն ու մօր,
Մանր տղայք են ուրախ,
Ունին կաղին, կոզինախ,
Սալորի չիր, չամիչ, թուգ,
Փշատ, ունաք ու ընկոյզ:
Մանր տղայք, չի մոռնաք,
Աշխարհքումս չէք մենակ,
Ուրիշ շատ խեղճ տղայք կան
Աղքատ եւ անօգնական,
Նոքա հայր եւ մայր չունեն,
Սեւ չոր հացի կարօտ են,
«Աղքատներին» ողորմած
Եղէ՛ք»,- կ'ասէ ձեզ Աստուած:

ՌԱՓՍՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ե՛կ, ընկե՛ր իմ, էլի՛ ասենք էս Նոր տարուն նոր բարեւ, էլի՛ յուսանք ու երագենք էս մութ օրին - լո՛յս արեւ... Հինը անցաւ, հինը գնաց... Աստուած անի՛ - յե՛տ չգայ, Մեր դարդերին նա խո՛ւլ մնաց, Մեր ցաւերին՝ լո՛ւս վկայ... Աստուած անի՛ - յե՛տ չգայ... Ե՛կ, ընկե՛ր իմ, էլի՛ ասենք էս Նոր տարուն նոր բարեւ:

Դարձեա՛լ Նոր տարի... Օ թող նորանոր վառվռուն յոյսեր, գարնան երագներ Մեր կեանքը, հայեր, յուզեն եւ այսօր, Նորից բորբոքեն մեր լքեալ սրտեր: ...Թո՛ղ տանջուինք, մօտ է ե՛ւ մեր արշալոյս, Միայն թէ յառաջ, յառաջ անվեհեր... ԱՆԵՔՍԱՆԴԻ ԾԱՏՈՒԻՆ

Մարտի 1
Նոր տարի... Օ թող նորանոր վառվռուն յոյսեր, գարնան երագներ Մեր կեանքը, հայեր, յուզեն եւ այսօր, Նորից բորբոքեն մեր լքեալ սրտեր: ...Թո՛ղ տանջուինք, մօտ է ե՛ւ մեր արշալոյս, Միայն թէ յառաջ, յառաջ անվեհեր... ԱՆԵՔՍԱՆԴԻ ԾԱՏՈՒԻՆ

Շաբ.ը էջ 19

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ԵՒ ԽՈՋԵՐ

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով, Եւրոպայի Հայերի Համագումարի անունից մեր մաղթանքներն ու պատգամն ենք յղում Մայր հայրենիքում եւ ողջ աշխարհում ապրող հայ ժողովրդին, ցանկանալով կեանքի բոլոր ասպարէզներում յաջողութիւն եւ երջանկութիւն:

2015 թուականի շեմին հարկ ենք համարում ի մտի ունենալ անցնող տարուայ մի քանի չիշատակելի դէպքեր.

Միջին Արեւելքում եւ յատկապէս Իրաքում եւ Սիրիայում շարունակուեցին բռնութիւններով պատերազմական գործողութիւններ, անզէն քաղաքացիների նկատմամբ դաժանութիւններ, որից անբաժին չմնացին նաեւ մեր հայրենակիցները: Թուրքիան այս ասպարէզում շարունակեց իր անթաքուց հակահայ քաղաքականութիւնը, աջակցելով ծայրայեղական խմբաւորումներին, վնաս հասցնելով ոչ միայն հայ եւ այլ փոքրամասնութիւններին, այլ նաեւ տարածաշրջանի ողջ ժողովուրդներին: Իրողութիւն՝ որի մասին արդէն խոստովանում է միջազգային հանրութիւնը:

Ճարտարարուեսականացած հարուստ գերտէրութիւնների եւ մանակութեան ու աղքատութեան եզրին հասած փոքր ու թերաճ երկրների մեջ եւ բեւեռացումը շարունակուեց է խորանալ: Գերտէրութիւնների միջեւ ընթացող կատաղի մրցակցութիւնը անտեսում, ոտնահարում է փոքր պետութիւնների անկախութիւնը: Արեւմուտք-Ռուսաստան համարտութիւնը այսօր վտանգաւոր եզրերի է հասել եւ սպառնում է աշխարհը կրկին տանել մի նոր երկփեղկուածութեան:

Նման անմարդկային ու անարդար չափերի հասած միջազգային յարաբերութիւններում, անչափելի հարատւութեան եւ իշխանութեան տիրացած աշխարհի գերտէրութիւնները ոտնահարում եւ ճգնում են, ինչպէս միշտ առաջին հերթին փոքր ազգերին ու ժողովուրդներին, քայքայման են ենթարկուած փոքր երկրներն ու պետութիւնները, յատկապէս այն երկրները, որոնք գուրկ են ազգային պետականութիւնից, որոնց իշխանութիւնները առաջնորդում են սեփական շահերով:

Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնները այսօր, առանց երկրում խորքային եւ հանրային քննարկումներ անցկացնելու, երկրի պետական հեռահար շահի եւ անվտանգութեան հետ առնչուող ճակատագրական որոշումներ են կայացնում, միանգամայն ենթարկուելով արտաքին ուժերի յորդորներին՝ շրջանցելով երկրի սահմանադրական կարգը:

Հայաստանի Հանրապետութիւնն այսօր գտնուելով նշուած միջազգային երկփեղկման կիզակէտին աչքը Եւրոպային յառած, արհամարուելով՝ կամազուրկ քայլում է դէպի Մաքսային միութիւն:

Ո՞րն է դեռեւս չկայացած այդ Միութեան հեռանկարը, եւ ի՞նչ կարող է տալ Հայաստանին, դեռեւս շարունակուած է մնալ անյայտ:

Մինչ այդ, Հայաստանի Հանրապետութիւնում շարունակուած է հասարակական բազմաբնոյթ բեւեռացումը: Աղքատութիւնը շարունակուած է խորանալ:

Երկրի անկախութեանը եւ անվտանգութեանը սպառնացող արտագաղթը շարունակուած է իշխանու-

թիւնների լուռ անտարբերութեան պայմաններում: Օրինախախտումների եւ կոռուպցիայի մէջ մեծ դերակատարութիւն ունեցող վատամբաւ տարրեր, օրէնքի ոգով պատժուելու փոխարէն, վերանշանակուած են նոր պաշտօնների:

Աճող աղքատութիւնը եւ իշխանական տարրերի վերջին երկու տասնամեակների ընթացքում խորացած կամայականութիւնը եւ նրանց փաստացի անպատժելիութիւնը, երկիրը առաջնորդում է դէպի անկասխատեսելի սպազայ:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները Սփիւռքի նախարարութեան կամայ թէ ակամայ վարած անհեռատես քաղաքականութեան պատճառով, շարունակուած են մնալ «պալատական գործելաոճի» գերին:

2014 թ.-ին մենաշնորհեանքի Հայաստան-Սփիւռք անփառունակ համաժողովին յաջողեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի առաւել անփառունակ դրամահաւաքը, որն ապացուցեց Սփիւռքի լիակատար անվտանգութիւնը այդ կառույցներում տիրող տրամաբանութեան եւ գործունէութեան նկատմամբ: Դրամահաւաքի անարդիւնաւետութիւնը կրկին անգամ փաստեց, ԵՀՀ-ի կողմից բարձրացուած հարցերին լուրջ վերաբերումով զբաղուելու անհրաժեշտութիւնը: Արդարեւ, վերամբարձ ու բովանդակազուրկ յայտարարութիւնները, (բացառութիւնները յարգելով), կառուցներում մասսայական եւ մասնագիտական ներկայութեան բացակայութիւնը, սեփական շահից մեկնած կառույցներ կազմելու իրողութիւնը՝ չէր կարող տեղի ունեցածից աւել լաւ արդիւնք ապահովել:

Հայաստանի կայուն եւ զօրացող պետականութեան հաստատումը, Արցախի անվտանգութիւնը, Սփիւռք-Հայաստան կայուն եւ արդիւնաւէտ յարաբերութիւնների կայացումը, երկրի ֆինանսական եւ տնտեսական զօրութիւնը, հայոց խլուած իրաւունքների վերականգնումը, արտագաղթի փոխարէն՝ ներգաղթը չեն կարող կայանալ, անօրինութեան, անպատժելիութեան եւ կամայականութեան, ազատամարտիկների նկատմամբ ոտնձգութեան, քաղաքացիների արդար պոռթկումը լուսնային համար անհաբեկման պայմաններում: ՀՀ քաղաքացիների եւ Սփիւռքի համար Հայաստանը չի կարող դառնալ երազելի երկիր, երբ առաջնորդում է, անկիրթ, նուազագույն դաստիարակութիւնից ու գիտելիքից զուրկ նախարարների, մարզպետների, քաղաքապետների եւ ԱԺ պատգամաւորների կողմից:

Նման պայմաններում, երկրի գրեթէ միակ յուսալի յենարանը շարունակուած է մնալ Հայաստանի եւ Արցախի աննկուն բանակը: Հայկական բանակը, երկրում տիրող բոլոր բացասական երեւոյթների կողքին, գրեթէ այն միակ կառույցն է, որ շարունակում է յարգուած մնալ ՀՀ քաղաքացիների եւ Սփիւռքահայութեան կողմից, ինչը նուաճել է մեծ գոհողութիւնների շնորհիւ:


Ուստի փառք ու պատիւ մեր գոհուած զինուորների չիշատակին եւ համբերութիւն նրանց յարգելի ընտանիքներին: Հազար փառք հայրենի սահմանները պաշտպանող մեր քաջարի զինուորներին, սպաններին

Շաբ.ը էջ 18

ՆԱԶԱՐԻԹ «ԱԶԱՊԱՐԸ»

Ա.Լ.ՊԵՐՄԻՆԱՍԵԱՆ

Այո՛, զանազանուեղու համար մեր միևս Նազարիթ կոչուող ընկերներին, գինք կը կոչէինք «Ազապահ»ը, խորքին Նազարիթի կեանքին մէջ մեծ դեր ունեցած է այս մակդիրը, եւ ան իր ետին ձգեց որպէս լիշատակ «Ազապահան Տոհմը Դարերու ընթացքին» գիրքը որու համար ան յամառօրէն աշխատանք տարաւ եւ 2008ին, մեծ գոհունակութեամբ իր տպարանէն՝ «Արաքս» տպարանէն հրատարակեց իրենց տոհմին պատմական գիրքը:



Երբ Նազարիթին մասին պիտի խօսինք, դժուար է չըսուիլ որ անկիւնէն սկսիլ իր ձիրքերուն եւ տաղանդներուն մասին:

Նազարիթ հազիւ աւարտած Սահակեան վարժարանը, իսկոյն նետուեցաւ գործի ասպարէզը, աշխատելով որպէս գրաշար «Շիրակ» տպարանէն ներս, ան զարգացող իր գիտելիքները տպարանական գործին, եւ շարունակեց իր պատանեկան օրերէն մինչեւ կեանքին վերջին օրերը, մնալով տպարանի գործին մէջ, հասարակ պաշտօնեայէ մը, որպէս գործատէր, Միացեալ Նահանգներու Փաստինա քաղաքին մէջ, հիմնելով «Արաքս» տպարանը 1980ին իր երկար տարիներու լաւ բարեկամ Ալպեր Մինասեանի հետ, որ այսօր, բոլորիս հետ կը սգայ իր անժամանակ մահը, երկար առողջական դժուարութիւններէ վերջ:

Նազարիթը կը սիրէր թատրոնը, եւ իր երիտասարդ տարիքէն բեմ բարձրանալու ձիրքը իր մէջ շատ զօրաւոր էր, եւ իր դերասանական կատարողութիւնը զինք մղեց աւելի խորը մխրճուելու բեմի արուեստին, ան զնայ Հայաստան, ուր սիրուեցաւ եւ սիրեց «Հայ թատրոնը» եւ վերագրածաւ Լի-

բանան որպէս «գիմարողար» գորշատ լաւ կատարեց աւելի քան 40 տարիներ, վկայ իր վաստակին, իր մահուան լուրին, Հայաստանէն, Լիբանանէն եւ Միացեալ Նահանգներէն, ստացուած ցաւակցական հեռագիրները եւ հեռաձայնները, զեղարուեստի աշխարհի մեծագոյն անձերէն:

Նազարիթին երեսին ժպիտը, խնդուքը եւ ծիծաղը միշտ ներկայ էին, այն ձեւերովներուն փնտրուած տամատան եւ գուրճաբան խօսնակն էր, առաւել, երգիչ եւ սամուռնքող, ան մաս կազմած է երգչախումբերու եւ արտասանական երեկոներու ելուցիւններով:

Արուեստ, ծիծաղը, երգը, թատրոնը իր առօրեային մաս կազմեցին իր կեանքի երկայնքին:

Նազարիթը ծնած ու մեծցած է հաւատաւոր Ս.Դ.Հ. կուսակցութեան մաս կազմող ընտանիքի, ու ան իր փոքր հասակէն եղաւ Տխրունիական եւ ապա հաւատաւոր երգուեալ Հնչակեան ընկեր, ծառայելով իր սիրած եւ պաշտած գաղափարականին, մաս կազմեց Ս.Դ.Հ. կուսակցութեան մարմնի անդամ, հաւատարմօրէն սատարելու այս

ափերուն հիմնուած Ս.Դ.Հ. կուսակցութեան քննարկումներուն:

Անձնապէս որպէս իր գործընկերը կրնամ ըսել, Նազարիթը աւելի ժամանակ կը տրամադրէր իր առօրեային իր կուսակցութեան եւ անոր յարակից մարմիններուն քան գործին, որովհետեւ շատ պէտք կար նման անձի մը յառաջ տանելու կուսակցական եւ միութենական աշխատանքները:

Այո, կուսակցութիւն, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն, Հ.Մ.Մ., սկուսակցական շարժում, քարոզչական աշխատանք եւ մամուլ:

Ընդունելի դրականութիւն մըն է, եթէ Նազարիթը եւ Արաքս տպարանը 1980ին գոյութիւն չունենային, «Մասիս» շաբաթաթերթը 1981 Յունուարին հրատարակելը շատ դժուարին հրամայական մըն էր:

Նազարիթի նուիրումը եւ հակայական ներդրումը «Մասիս» շաբաթաթերթին, Ս.Դ.Հ. կուսակցութեան օրկանին հրատարակութեան գծով գինք կ'արժանացնէ իր սիրած գաղափարականին «խնթը» կոչելու մակդիրը, հաւանաբար, առանձին յօդուածով մը կարելի ըլլայ պատմութեան յանձնել «Մասիս»-ի ծնունդը իր սողմային վիճակէն, դէպի հրատարակութիւն եւ շարունակութիւն մինչեւ օրս, գրեթէ 35 տարիներու, անշուշտ Նազարիթին կողքին կային շաբաթ մը նուիրեալներ, որոնք առաջին օրէն մինչեւ օրս մաս կը կազմեն «Մասիս»-ի խմբագրութեան եւ անոր աշխատակիցներուն:

Նազարիթը իր կարեւոր ներդրումը ունեցած է «Սիսի Հայրենակցական Միութեան» հիմնադրութեան եւ անոր կապուած աշխատանքին - ան հպարտօրէն կը խօսէր «Սիսի» եւ սիսեցիներուն մասին, եւ ան իր կեանքի ընկերը զատեց սիսեցի Տ. Սարգիս Ա.Բ.Ք.Յ. Անդրէասեան դուստրը՝ Ծովինարը եւ իրենց ամուսնութիւնը

բախտաւորուեցաւ երկու սիրունիկ գաւակներով՝ Նարինէն եւ Սագօն, որոնք հասակ նետեցին այս ափերուն, բայց մնացին ամուր, իրենց հայկականութեամբ:

Նազարիթի կեանքի մեծագոյն դժուարութիւնը եղաւ 15 տարիներ առաջ կորսցնել իր շատ սիրելի Ծովիկը - Արքայութենէն դժոխք իջնելու հաւասար եղաւ Նագոյին կեանքը: Ան վերջին տասնամեակներուն կորսնցող մայրը, քեռայրները, քրոջ որդին, աներհայր եւ աներմայր - կարծես կեանքը դարձաւ դաժան եւ անիրաւ երբ ինքն ալ վերջին 4-5 տարիները տառապեցաւ կարգ մը առողջական դժուարութիւններէ, որոնք կանխեցին իր այս աշխարհէն մեկնումը:

Այո մեր «Ազապահ» ոչ հարուստ էր, ոչ ալ ջոջ, ան ապրեցաւ իր առօրեան որպէս պարզ անհատ, բայց շնորհիւ իր ընկերային ոգիին, եւ ծառայասիրութեան, ունեցաւ համբաւը, որպէս ժողովրդականութիւն վայելող բոլորէն սիրուած եւ յարգուած բարեկամ մը, որոնք Նոյեմբեր 20, 2014ին փութացած էին Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, իրենց վերջին յարգանքը ցոյց տալու մեզմէ առջաւէտ բաժնուող Նազարիթին:

Անձնապէս կը սպամ իմ աւելի քան 50 տարիներու մօտիկ ընկերոջս եւ գործընկերոջս մահը, եւ կ'ուզեմ իմ ցաւակցութիւնս յայտնել իր քոյրերուն Անգիլիէին եւ Մարիային եւ եղբօր վահէին եւ իրենց ընտանիքներուն: Իսկ սիրելի Նարինէին եւ Սագօյին շարունակեցէք ձեր հօր ձգած աւանդը, ապրեցէք իր յիշատակովը, իր երեք թոռնիկները հազիւ յիշեն իրենց մեծ հայրը, բայց շատ պիտի լսեն իր մասին:

Հողը թեթեւ գայ վրադ սիրելի ընկերս:

«ՍԻՐՈՎ ՅԻՄՈՒԲԾ» ԾՐԱԳԻՐԸ

Շարունակուած էջ 8-էն

Անհրաժեշտութեան պարագային ԱՀԱԸ-ի կայքէջին վրայ կարելի է գտնել գլխարկներու եւ ծածկոցներու հիմնական օրինակներ: Կը խնդրուի որ միայն ակրիլային (acrylic) մանուած բուրդ օգտագործուի:

Անհատներու, տարբեր կազմակերպութիւններու եւ եկեղեցական խումբերու աջակցութիւնը այս ծրագրին, իսկապէս քաջալերական է եւ օգտակար Հայրենիքի մեր նորածիններուն: North Carolina-էն սիւկի մը, որ վերջերս սկսաւ մասնակցել այս ծրագրին, կը գրէ. «Իմ մեծ մայրս իր ընտանիքին մէջ միակ վերապրողը եղած է Յեղասպանութեան: Ես իրմէ եւ իմ մօրմէս սորված եւ տիրապետած եմ ձեռագործի տաղանդին: Երախտապարտ եմ Աստուծոյ ինծի տրուած այս շնորհքին համար եւ կ'ուզեմ այս տաղանդս գործածել օգնելու ուրիշներուն: Շնորհակալ եմ որ ձեր ծրագրին միջոցաւ կրնամ իրականացնել Հայաստանի մանուկներուն օգնելու իմ երազանքս»:

Նոր Տարուան եւ Սուրբ Ծնունդի եղանակին, Երեւանի Մալաթիա-Սեբաստիա Վարչական Ծրշանի տնօրէնութեան համագործակցութեամբ, յատուկ հաւաքոյթ մը կազմակերպուեցաւ ԱՀԱԸ-ի կողմէն եւ Շուշանիկ Աւետիսեան Դպրոցին եւ Համայնքային

Կեդրոնին մէջ, շրջանի երեխայ սպասող մանկավարժուհիներու համար: Դպրոցի Դահլիճին մէջ ներկաները սիրով ողջունուեցան տնօրէնուհի, Մելանիա Գեղամյանի, ԱՀԱԸ-ը Հայաստանի Ներկայացուցիչ Յարութ Ներսէսեանի, ինչպէս նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական Ծրշանի տնօրէնութեան կողմէ: Հաւաքոյթի ընթացքին ներկաներուն ցուցադրուեցաւ յատուկ ֆիլմ մը մայրութեան մասին: Զուարճալի հաւաքոյթի սակարկին երեխայ ակնկալող մանկավարժուհիներուն նուիրուեցան նորածիններու համար սիրով հիւսուած գլխարկներ, ծածկոցներ եւ այլ հագուստեղէն, ինչպէս նաեւ 2015-ի օրացույցներ, բացիկներ եւ ԱՀԱԸ-ի 95 տարիներու պատմութիւնը ներկայացնող գրքոյկներ: Մալաթիա-Սեբաստիա շրջանի տեղական օրթերթերը անդրադարձան այս յատուկ միջոցառումին մասին:

«Սիրով Հիւսուած» Մրազրի տիկիններուն բաղձանքն է, որ ժամանակ մը գայ, երբ Հայաստանի ամէն նորածին մանուկ ծննդատուններէ տուն վերադառնալ խանձարուրուած ծածկոցով եւ գլխարկով սիրով հիւսուած եւ նուիրումով ձեռք նման հոգատար անձերու կողմէ:

Յաւելեալ տեղեկութիւններու կամ այս ծրագրին մասնակցելու համար կրնաք կապ հաստատել

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ

Շարունակուած էջ 17-էն

Եւ նրանց բոլոր հայրենասէր հրամանատարներին:

Եւրոպայի Հայերի Համագումարը իրապաշտութեամբ եւ լաւատեսութեամբ տոգորուած ցանկանում է, որ 2015-ը դառնայ դէպի վերելք առաջնորդող վճռական փոփոխութիւնների տարի, ինչպէս նաեւ խորհրդանշական այս տարեթուով՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններում խորքային եւ ներդաշնակ գործունէութեան սկիզբ:

Պատմութեան ողջ ընթացքում հայ ժողովուրդը իր ներքին կարելիութիւնների եւ կամքի հօր ուժով պաշտպանուել եւ յաղթահարել է բազում արհաւիրքներ ու նուաճել ազատ ու երջանիկ ապրելու անկողաւ իրաւունքը:

Եւրոպայի Հայերի Համագումարը մաղթում է, որ հայրենաբնակ մեր ժողովուրդը միահամուռ ուժերով այս անգամ եւս յաղթահարի բոլոր խոչընդոտները եւ կերտի իր ապագան, այնպէս որ այլեւս ոչ մի

հայ ստիպուած չլինի լքել իր հայրենիքը, իր հազարամեայ հարազատ հողը:

Իսկ սփիւռքահայութեանը մաղթում ենք, որ գօտեպնդուած շարունակի պայքարը յանուն Հայաստանի արեւմտեան հատուածի ազատագրութեան, Հայաստանի Հանրապետութեան հզօրացման եւ զարգացման եւ Սփիւռքի երիտասարդութեանը իր հայրենիքին, ազգային արմատներին եւ արժէքներին կապելու դժուարին պայքարում յաջողութիւն:

Քանզի ամէն մարդ երջանիկ ու կատարեալ կարող է լինել իր հայրենիքում...

Եւ ի վերջոյ, աշխարհին մաղթում ենք խաղաղութիւն եւ կայունութիւն, իսկ մեր հայրենակիցներին աշխարհի չորս կողմերում՝ հաւատք, միասնութիւն եւ աննկուն կամք: Մաղթում ենք, որ 2015-ը լինի առողջութեան, խաղաղութեան եւ արդար պահանջների իրականացման տարի:

Եւրոպայի Հայերի Համագումար Շուսեդիա, Ստաթհոլմ

ԱՀԱԸ-ի կեդրոնին հետ՝ հեռ. 201.265.2607, կամ այցելել ՀԸՆԿերացութեան կայքէջը - www.amaa.org եւ սեղմել Stitched with Love tab-ը: Այս ծրագրին կրնաք մասնակցել նաեւ մանուածքի եւ փոխադրութեան ծախսերուն

համար ձեր նիւթական նուէրները դրկելով ԱՀԱԸ-ը Կեդրոնը՝ 31 West Century Road, Paramus, NJ 07652: Զեր նուիրատուութիւնը credit card-ով ընելու համար, կրնաք այցելել ՀԸՆԿերակցութեան կայքէջը - www.amaa.org:

ՇՈՒՓՍԻՄԷ ԼԱՉԻՆԵԱՆ



ՇՈՒՓՍԻՄԷ ԼԱՉԻՆԵԱՆ (1928-2014)

ՇՈՒՓՍԻՄԷ ԼԱՉԻՆԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 911071

- Խնդրողներն են՝
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սոնա Լաչինեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Լուսին Լաչինեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան եւ զաւակները
Տէր եւ Տիկ. Զորապ եւ Սեդա Պողոսեան եւ զաւակները
Տիկին Վարդուհի Եաղլըճեան

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՇՈՒՓՍԻՄԷ ԼԱՉԻՆԵԱՆԻ մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները՝ «Մասիս»ին:

Table with 2 columns: Donor Name and Amount. Includes names like Անի եւ Պէյր Գանըր, Տէր եւ Տիկին Տիգրան Սարաֆեան, etc.

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Սաղրեան ընտանիք կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակեցութիւնները հանգուցեալի համայն հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակեցութիւնները հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Շարունակուած էջ 5-էն

բայց նաեւ զօտեպնդիչ եւ մշտանորոգ պատգամ մը կայ առաջին Ս. Ծնունդի այս պատկերին մէջ: Յոյժ խորհրդանշական է, որ Աստուած աշխարհ կու գայ իր Միածին Որդիին միջոցաւ ամենէն չետին եւ աղտոտ տեղ մը, ախոռի մը մէկ անկիւնը՝ մաքրելու գայն իր ապականութենէն: Ամենէն անսպասելի վայրը իրեն ծննդավայր դարձնելով խորիմաստ պատգամ մը կը հաղորդէ մարդկութեան. թէ Աստուած կու գայ ազատելու մեղաւոր մարդը մեղքի տիղմէն վերցնելու եւ իրեն նոր կեանք տալու: Դժբախտաբար քսան դարեր

յետոյ, երբ կը նայինք մեր ժամանակակից աշխարհին, Յիսուսի ծննդավայրէն սկսելով մինչեւ երկրագունդի հեռաւոր մասերը, կը տեսնենք նոյն տխուր պատկերը: Մեղաւոր մարդը դեռ կը շարունակէ մեղքի «ախոռ»ին մէջ ապրիլ: Կը վրդովինք, երբ ականատես եւ ականջալուր կ'ըլլանք մարդոց իրարմերժ յարաբերութիւններուն, անգթութիւններուն եւ թշնամութիւններուն, որոնք նուազ կեղտոտ ու գարշահոտ չեն, քան Բեթղէմէ մի գոմը: Երբ կ'իմանանք Միջին Արեւելքէն մինչեւ Հեռաւոր Արեւելք, Ափրիկէէն մինչեւ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու մէջ պատահող մարդկային արժէքներ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

Շարունակուած էջ 5-էն

երկրպագելէ ետք, վերադարձան իրենց տուները, վերանորոգուած եւ անսահման սիրով լի հոգիով: Սիրելի եղբայրներ ու քոյրեր, այս Ծննդեան օրերուն, մենք ալ պահ մը դադար առնենք ամփոփուելու եւ խորհրդածելու Յիսուսի մասին. Աստուծոյ Որդին որ աշխարհ եկաւ մեզի հետ ըլլալու համար: Այդ ջերմ հաւատքի, յոյսի եւ սիրոյ մթնոլորտը որ կը պարուրէր սուրբ Ընտանիքը Բեթղէմի քարայրին մէջ, պիտի թափանցէ նաեւ մեր հոգիներէն ներս, ոչ թէ մեր արժանիքներուն համար՝ այլ Աստուծոյ ողորմութեան ու շնորհքին միջոցաւ: Հակառակ կեանքի անապահովութիւններէն ծագած տագնապին, որ կը վրդովէ մեզ, փրկութիւնը, որուն կը ձգտինք ամենքս, տակաւին կարելի է: Յիրաւի, սուրբ Մատթէոս աւետարանիչը կ'ըսէ թէ խանձարուներով փաթթուած եւ մտուրին մէջ գետեղուած Մանուկին անունը «էմմանուէլ» է, որ թարգմանի «Աստուած մեզի հետ» (Մատթ. 1, 23): Աստուած միշտ կ'ուզէ ներկայ ըլլալ մեր կեանքին մէջ եւ կու գայ մեզ փրկելու համար: Յորդանան գետին եզերքը խոնուած բազմութիւնը հարցուց Յովհաննէս Մկրտիչին. «Ի՞նչ պէտք է ընենք»: Ան ըսաւ անոնց՝ որ իրենց ունեցուածքը կ'իսն չունեցողին հետ, պարկեշտ ըլլան եւ յարգանք ունենան բոլորին հանդէպ (Ղուկ. 3, 10-14): Բեթղէմէ մէջ ծնած Մանուկը մեր փրկութեան միակ յոյսն է: Եկէք, հովիւներուն եւ Մոզերուն նման, զինք սրտբաց ընդունինք: Սորովինք Աստուածամօր՝ Մարիամի հաւատքէն, որ ուշադիր էր իր շուրջ պատահածներուն եւ «Այս ամէնը կը պահէր իր սրտին մէջ եւ կը խորհրդածէր անոնց վրայ» (Ղուկ. 2, 19), միշտ պատրաստ

ըլլալով իր բաժինը բերելու եւ մասնակցելու աստուածային խորհուրդին: Անոր օրինակին հետեւելով է, որ Քրիստոս Փրկիչը պիտի ծնի մեր սրտերուն մէջ այսօր: Ինչպէս որ Փրանկիակոս Քահանայապետը կ'ըսէ իր առաքելական յորդորին մէջ. «Մարիամը՝ աղքատիկ խանձարուներով եւ առատաբուն սիրով, կրցաւ ախոռ մը տունի վերածել Յիսուսի համար... ան այն առաքելալն է որ կ'ընկերանայ մեզի մեր ամբողջ կեանքին ընթացքին, իր մայրական սիրով բանալով մեր սրտերը հաւատքի լոյսին: Որպէս հարազատ մայր, ան կը քալէ մեր կողքին, կը կիսէ մեր պայքարները եւ մեզ միշտ կը համակէ Աստուծոյ սիրով» (Evangelii Gaudium, 286): Սուրբ Ծնունդը, որ Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնն է մեզմէ իւրաքանչիւրին հանդէպ, մեզի կը պարզեւէ այն ուրախութիւնը եւ ուժը, որոնք մեզ ատակ կը դարձնեն փափաքելու եւ գործելու մարդկութեան ապագայ բարիքին համար այս աշխարհի մէջ որ յաճախ հակասական է: Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Աստուած որ քեզ ստեղծեց առանց բու օգնութեանդ, պիտի չփրկէ քեզ առանց քու գործակցութեանդ»: Հարկաւոր է, որ ամէն անձ ստանձնէ իր պատասխանատուութիւնները: Կրնանք միասին դիմագրաւել կեանքի դժուարութիւններն ու տագնապները, միմիայն վերահաստատելով փոխադարձ վստահութիւնը եւ համագործակցելով, կառուցանելու համար հասարակութեան բարիքը: Հայցելով Մանուկ Յիսուսին օրհնութիւնը բոլորիդ վրայ, ի սրտէ կը մաղթեմ որ Ան այսօր ծնի ձեր սրտերուն մէջ եւ իւրաքանչիւրիդ պարզեւէ սէր, խաղաղութիւն եւ երջանկութիւն: Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ Զեզի մեզի մեծ աւետիս

որ Բեթղէմէ մի նորածին Արքան իր կեանքին Տէրն ու Փրկիչը դառնայ: Այն ատեն Ս. Ծննդեան հինաւուրց, բայց դասական յայտարարութիւնը նշանակալից պիտի դառնայ իրեն համար եւ ինքն ալ լիւրաւ իմաստով պիտի յայտարարէ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզի եւ մեզի մեծ Աւետիս»:

ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ
Գործադիր Տնօրէն է Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին

ԱՍԱՆՈՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ

Շարունակուած էջ 17-էն
...Դարձեալ Նոր տարի,
թող ուրախանան,
Բախտաւոր կեանքով վերածնութեան,
Ում ճակատագիրն այդ վիճակէն,
Ով միշտ յուսացել եւ սպասել է,
Բայց ինձ ի՞նչ պիտի բերէ Նոր տարին,
Ո՞չ արդեօք նոր ցաւ
իմ տանջուած սրտին...
Ախ, ոսկի շողը մի նոր
զգացմունքի...
ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ ՅՈՎ. ՀԱՆՆԷՍԵԱՆ
Ներկայացրեց
ԱՐԵՒԻԿ ՎԱՐՇԱՍԵԱՆԸ

ՄԵԼՔՈՆ ՄԻՐԱՂՈՅԵԱՆ

Մարումակուած էջ 6-էն

«Տաս վայրկեան վերջ, երկու հայ բժիշկներ եկան եւ, օրինական երդումը ընելէ ետք, վիրաւորը քննեցին ու յայտնեցին, թէ վէրքը յառաջացած է գինուորական մեծ գէնքէ մը արձակուած գնդակէ, որ գանկին վերի գագաթի կողմէն մտած եւ աչքէն դուրս ելած է: Այս որ լսուեցաւ, ժողովուրդը սկսաւ աւելի բուռն կերպով արտայայտուել: Հէ՞ որ բժիշկներու իսկ յայտարարութեամբ ոճիրը գործուած էր այդ անիծեալ տէվըյէյին (չրջուն ոստիկանախումբ.- Ե.Ճ.) կողմէ»(12):

Ասոր գուզահեռ, վանի տեղական իշխանութիւնը, դատարան կը դրկէ տեղեկագիր մը, ուր կ'ըսուի թէ Ա. Ոստանիկի մարմնէն հանուած գնդակները պետական գէնքերէ արձակուած չեն: Այդ մասին «Բիւզանդիոն» կը գրէ.- «Թոռուէնք որ այդ տեղեկագիրը պէտք եղած վստահութեան դրոշմը չի կրեր յաչս ժողովրդեան, քանի որ վեց ամենավստահելի վկաներ, որ պահակախումբի համազարկ կրակէն հրաշքով ազատուած են, հակառակը կը վկայեն:... Ընդհանուր կարծիքն այս է որ դատարանին գնահատութիւնը չպիտի կրնայ կրել լիակատար անկախութեան դրոշմը, քանի որ կուսակալը, որուն պաշտօնանկութիւնը պահանջուած էր, չսփէն աւելի շահագրգռուած է այս ինդրով (13):

Կ'աւելկոծին նաեւ ազգային մարմիններն ու իշխանութիւնները: Ս Դ Հնչակեան, Հ Յ Դաշնակցութեան եւ Սահմանադիր Ռամ-կավար կուսակցութիւններուն վա-նի վարչութիւնները, այս ոճիրին մանրամասնութիւնները տեղեկագրող եւ այդ դատապարտող համա-տեղ հեռագիր մը կը յղեն Կ. Պոլիս՝ ազգ. երեսփոխանական ժողովի քաղաքական ժողովին. վերջինս, այդ կը ներկայացնէ Բ. Դոան (14): Ներքին գործոց նախարար Թաւեաթ փաշա, նորընտիր պատրիարք Զաւէն Եղիայեանին պաշտօնագրով մը կը յանձնարարէ չստուգուած տեղեկութիւններու հիման վրայ տեղեկագիրներ (Թաքիր) չդրել (15): Յաջորդ օր, Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը կը հանդիպի Թաւեաթ փաշայի հետ եւ անոր կը փոխանցէ մանրամասնութիւններ Ա. Ոստանիկի սպանութեան շուրջ: Թաւեաթ կ'ըսէ թէ իրեն հասած նոր տեղեկութիւնները կը հաստատեն թէ ոճիրը հայերը գործած չեն (16):

Այս միջոցին, վան կը դիմէ ընդհանուր գործադուլի: Շուկան հինգ օր փակ կը մնայ:

Ա. Ոստանիկի թաղումը կը վերածուի հակապետական համազգային ցոյցի: Թաղման թափօրին առջեւէն կը քալեն հայ կուսակցու-

թիւներու կողմէ կազմուած գինեալ ջոկատներ, ոստիկանական միջամտութեան մը պարագային գինեալ ընդդիմադրութիւն ցոյց տալու համար: Յիրաւի, ոստիկանութիւնը կը փորձէ փոխել թաղման երթին ընթացքը, բայց կը հանդիպի վճռական կեցուածքի եւ տեղի կու տայ: Այս մասին դաշնակցական վանեցի գործիչ խորով Թիւթիւնեան կը գրէ.- «Հարա-հրոցը կը սկսէր, մինչ մենք կը պնդէինք մեր անկապտելի իրաւունքին վրայ, թափօրը իրաւունք արարք տանելու համար, ուր տեղի պիտի ունենար թաղմանական արարողութիւնը, եւ ոստիկանութիւնը կը շարունակէր պնդել իր ստացած հրահանգին վրայ, զօրաւոր մղում մը մեր ետեւէն, մեզ առաջ կը նետէր, որուն վրայ ոստիկանները, հրացանները մեզի ուղղած, կը սպառնային կրակ բանալ: Մոլեգունած էին ամէնքը, «յառաջ, յառաջ» աղաղակներով:

Հերիք չէր որ սպանուած էին, խաղաղ փողոցին մէջ, անգէն հայ մը, հիմակալ ոստիկանները գոհին պատշաճ թաղումը կ'ուզէին արգիլել»(17):

Ճիշդ այդ պահուն, շտապօրէն վրայ կը հասնի վանի Գերմանիոյ հիւպատոսը ու միջամտութիւն կը կատարէ: Ոստիկանութիւնը տեղի կու տայ: Դէպքերու այս ընթացքին մասին «Բիւզանդիոն» կ'արձագանգէ.- «Վանէն երէկ Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէր թէ ատամնաբուժ Մեղզոն Միրսադոյեանի սպանութեան եւ թաղման ատեն իշխանութեանց անտեղի միջամտութիւնները կրնար հետեւանքներու յանգիլ, թէ Րումէլիէն եկող ոստիկաններուն արարքները անտեղեկի դառնալու առիծան հասած են, եւ թէ ցորչափ ապահովութեան պաշտօնեաներու եւ հրամանատարներու կէսը հայ չըլլայ, անհար է ապահովել Հայաստանի անդորրութիւնը եւ արգիլել չարաշուք դէպքերը:

Ժողովն այս հեռագրին վրայ, որոշեց դարձեալ թագրերով մը հարկ եղած դիմումն ընել դատական նախարարութեան մօտ եւ գործերու վիճակը ներկայացնելով դարման խնդրել»(18):

Թաղման արարողութեան դամբանականներ կը խօսին Արմենական կուսակցութեան կողմէ Յովհաննէս Կուլօղլեան, Դաշնակցութեան կողմէ՝ Վանայ իշխան, Հնչակեան կուսակցութեան կողմէ՝ Փարամազ: «Դաշնակցութեան ներկայացուցիչը երբ կ'աւարտէր իր հրաշունչ դամբանականը, Փարամազի գրկին մէջ կը գտնէր ինքզինքը: Եղբայրական այս գրկախառնութեանը պատճառած անօրինակ յուզումը դժուար է նկարագրել, մարդ չկար որ չ'արտասուէր»(19):

«Ազատ Ոստանիկ աններող

ողի ունէր բոլոր դատաւիճակներու եւ վարանոտ հոգիներու հանդէպ, հոգ չէ թէ անոնք ո'ր կուսակցութեան պատկանէին կամ ինչ բարձր դիրք գրաւած ըլլային: Ան առանց խնայելու կ'ըսէր այն՝ ինչ որ իր խորը համոզումն էր: Սուր եւ թափանցիկ ակնարկը մեծ ազդեցութիւն կը գործէր իր խօսակցին վրայ: Տասներկու տարիներու բանտային կեանքը եւ կրած սոսկալի տանջանքները իր ֆիզիքական անհատին վրայ թէեւ թողած էին իրենց խոր ազդեցութիւնը, բայց իր հոգեկան անձնաւորութիւնը մնացեր էր երիտասարդ, աննուած:

Իր վաւճառուն դէմքին վրայ աչքերը կը փայլափռէին անսպասեցանդով եւ ապագայի փայլուն յոյսերով»(20):

Ա՞յս է պատճառը որ Ա. Ոստանիկ կ'ենթարկուի անարգ ոճ-րափորձի: Թերեւս Կեսարիոյ մէջ իր ցուցաբերած խիզախ ելո՞յթը: Կամ աւելի հեռու, Ֆետայական շարժման իր անձնուէր մասնակցութիւնը: Բացառուած չէ որ, բոլոր պատճառները համատեղ:

Ա. Ոստանիկ կը թաղուի Արարգի գերեզմանատան մէջ, 1896ի վանի ինքնապաշտպանութեան ընթացքին նահատակուած իր գինակիցներուն վրայ: Կարճ ժամանակ անց, նոյն գերեզմանափոսին մէջ կ'ամփոփուին մարմինները իր դամբանախօս՝ իշխանին եւ վանի 1915ի ինքնապաշտպանութեան նահատակուած 12 դիրքապետերուն: Պատմութիւնը ունի՛ իր թելադրանքը:


Ծանօթագրութիւն

- 1) Սիրակ Սարիաղեան, «Կեանքիս Յուշերից», Երեւան, 2007, էջ 35:
- Ազատ Ոստանիկի ծննդեան թուականին մասին այս յղումը անհրաժեշտ կը գտնենք, որովհետեւ երկար տարիներ անոր ծննդեան թուականին մասին եղած են անորոշ նշումներ (1880ականներու սկիզբը), որոնք անոր յետագայ կեանքի ընթացքին էին համապատասխան:
- Նշենք նաեւ թէ վերոյիշեալ գիրքին մէջ, որպէս Ա. Ոստանիկի ազգանուններ կը նշուին Կանցեան եւ Տէր Մուրատեան:
- 2) «Հնչակ», 1914, Մայիս, «Մելիքոն Միր Սազոեան» (Ազատ Ոստանիկ):
- 3) Սիրակ Սարիաղեան, ... էջ 35:
- 4) «Հնչակ», 1914, Մայիս:
- 5) Արիս Բիւյ. Գալֆայեան (Հովիւ Եղեմի), «Գիրք Ելից Հայոց», Պէրուք, 1955, էջ 135:
- 6) «Երիտասարդ Հայաստան», 1909 Յունիս 2. Յ.Հ. «Հնչակեան Գործիչը Եւ Փաշան Կը Փրկեն Կեսարիան (Անճախակա Նամակէ)»:
- 7) Արիս Բիւյ. Գալֆայեան, «Չումայիլու», 1930, Նիւ Եորք, էջ 72:
- 8) «Բիւզանդիոն», 1909 Ապրիլ 28/11 Մայիս. «Կեսարիոյ Անցուցած Վտանգը»:
- 9) «Արարատ», 1962 Յունիս 10. Արա Ոսկեան, «Կեսարիոյ Ազատարար Ազատ Ոստանիկի Անմոռաց Յիշատակին»:
- 10) Արշակ Ալպոյանեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», Բ. հատ., Գահիրէ, 1937, էջ 1405:
- 11) «ժամանակ», 1912 Դեկտ. 26/1913 Յունուար 6, «Այսօրու Ոնիք Մը Վանի Մէջ». Գալի Եղեմ, 1912, Դեկտ. 29/1913 Յունուար 11, «Տէրոտի Շրջանը Սկսա՞ւ Արդեօք»:
- 12) «Հայրենիք», 1954, Հոկտ., թիւ 10(344). Մատթէոս Էպիֆանեան, «Օսմանեան Սահմանադրութեան Օրերուն»:
- 13) «Բիւզանդիոն», 1913, Սեպտ. 20/3 Հոկտ.:
- 14) «Ծանօթ» («Ազատամարտ»), 1912 Օգոստ. 31/13 Սեպտ.: (Այդ շրջանին ՀՅԴ Կ.Պոլսոյ օրաթերթ «Ազատամարտ» իշխանութիւններուն կողմէ կախակայնուած էր եւ լոյս կը տեսնէր «Ծանօթ» վերնագրով):
- 15) «Ծանօթ» («Ազատամարտ»), 1912 Սեպտ. 3/16:
- 16) «Ծանօթ» («Ազատամարտ»), 1912 Սեպտ. 4/17:
- 17) Խոսքով Թիւթիւնեան, «Անմահներու Հետ Վասպուրական Մեր Աշխարհին Մէջ», Պէրուք, 1974, էջ 135:
- 18) «Բիւզանդիոն», 1913, Սեպտ. 7/20 «Հայ-Ազգ. Լուրեր»:
- 19) Խոսքով Թիւթիւնեան, ... էջ 137:
- 20) «Հնչակ», 1914, Մայիս:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայրօփորքիք բուժում:
Գլխացաւ, վզի, սեւքի, յօզային եւ մկանային ցտեր:
Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabachian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com